

2135

201

7u-76

039 AUG 2003

2

ԿՐՈՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ-ՓԵԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գրելի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի  
առթիւ.


№ 5

## Ի ՆՉՊԵՍ ՍՏԵՂԾՈՒԵՑ

## Ա Շ Խ Ա Բ Հ Ա

Թարգմանաբար կազմեց

Գ-ր. միլ. Ա. Խոսկինսկի



2  
Բ-62

Թ Ա Յ Ա Խ Ա  
ով հշապերածուածական ալիք. № 17  
1914

EPDS YAM 81

ԳՐՈՂԱ-ԳԵՍՏԵԿԵՆ-ՓԻԼԻՍՊԵՏԵԿՈՆ ԳՐԵԴԱՐԵՆ

Գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի  
առթիւ.

201

№-76

Ա Հ Ա

№ 5.5 ..

Ժ

## ԻՆՉՊԵՍ ԱՏԵԼՆՈՒԵՑ

## Ա Շ Խ Ա Ր Հ Բ

Թարգմանաբար կազմեց  
Դ-ր. Փիլ. Մ. Խոստիկեան



Թ Ա Յ Լ Ի Ւ

Արագատիս Ժապերանոս, Ելիզ. № 17  
1914

13 MAY 2013

2135

9382-54

**ՅԱՌՈՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ**

«Կրօնապատմական-փիլիսոփայական» գրադարանի հետևեալ չորս գրքոյկները ա) Ի՞նչ է կրօնը Եթու է բարոյականութիւնը. բ) Սրբազն պատմութիւն խրայէլի. գ) Ի՞նչ է Աստուածաշունչը. դ) Բը Նազիտական և կրօնական աշխարհաեացքը արդէն լոյս են տեսիլ: Մամուլն ընդհանրապէս սիրով ողջունեցայդ գրքոյկները և ընթերցող հասարակութիւնը նկատեց, որ այդ գրքոյկներով կրօնապատմական փիլիսոփայական սրոշ հարցեր չնախապաշարուած ոգով թարմ գիտական ուղղութեամբ են լուսաբանուում Առասպեկտն իրը առասպեկտ, ուր էլ որ լինի, իրեւ ժողովրդական գրականութեան մի տեսակ բնորոշուում և գնահատուում է, իսկ կրօնական ոգին սրբազն գրքերից հանուում զտուում և յանձնաբարուում է լուրջ մտածողներին խոր զգացողների առանձին ուշադրութեանը:

Այս ոգով կազմուած մի հետաքրքրական գրքոյնէ «Խոնչպէս է սահեղուել աշխարհը» խորագիր կրող սահարը:

Բոլոր ժողովուրդների տիեզերածնութեան առավելները, զանազան ժամանակների գիտնականների, փիլիսոփաների, եւ կրօնական հանճարների աշխարհայեացքը տիեզերքի ստեղծագործութեան մասին այս գրքոյիկում ի մի են ամփոփուած:

Այսպէս որ ընթերցողը մի գաղափար կարող է

կազմել՝ թէ այս տիեզերքի ծագման մասին ի՞նչ են մտածել հին ազգերը անցեալ դարերում. ի՞նչ հայեացք ներ են եղել և կան ներկայումս և ո՞ր տեսութիւնները իշխող դառնալ են ձգտում:

Գրքոյն կազմուած է թարգմանաբար Յ. Wend-  
land բազելի աստուածաբանութեան պրօֆէսօրի die  
Schoepfung der Welt գրուածքից:

1913 դեկտ. 1

## ԴԱՌԱ ՄԱՍԻՆ

Առաջին և երրորդ պահությունները  
առաջար զայտուց և բարեկ բաժնի սկզբան առ ամ  
այլու մեջ առաջար խորածություն ուն այս պահությունը մաս  
-էն գործ ուղարկ ու անու այս պահությունը քայլ  
առաջ կը թերու գործակ ուղարկ դաշտը դաշտը  
առ առ առաջար ն Ա Խ Ս Բ Ա Ն ու յանդու

Ծնուռում է երեխան, և ուշադիր ու հիացած իւր կեանքի առաջին ամիսներին և տարիներին նայում է գէպի աշխարհն ու դէպի կեանքը: Նրա մէջ յառաջ է գալիս աստիճանաբար հարցասիրութիւն. նա ուզում է իմանալ ո՞րտեղից, ի՞նչու համար և ի՞նչպէս են առաջ եկել այս բոլորը: Յաճախ ծնողներն ու ուսուցիչները մնում են զարմացած, թէ որտեղից են գալիս այդ մտքերն և պաշարում երեխայի հոգին, և թէ ի՞նչպիսի յամառութեամբ երեխաները հետամուտ են լինում մի բաւարար պատասխան ստանալու՝ իրենց անթիւ հարցերին:

Նոյնն է պատահել մարդկութեան հետ։ Հարիւրաւը  
դարեր առաջ, երբ մարդկութիւնը իւր մանուկ հասակն  
էր թեակոխում, նա ինքն իրեն հարց տուեց. ո՞րտեղից  
է սկիզբն առել աշխարհը իւր հրաշալի և սարսափ ազ-  
դող երևոյթներով. ի՞նչպէս են առաջ եկել երկինքն ու  
երկիրը, արեն ու լուսինը, ծովն ու ցամաքը, բոյն ու  
կենդանին և մարդը. և վերջապէս ինչո՞ւ բնական երե-  
ւոյթներից մի քանիսը բարիք են առաջ բերում, ու-  
ժիշները չարիք։ Այս հարցերն զբաղեցնում են ամեն  
մի մանուկի, զբաղեցրել են մանուկ մարդկութիւնը,  
զբաղեցնում են ներկայումս մեզ, քաղաքակիրթ մարդ-

կութիւնը: Մարդիկ յաճախ յոգնում ու ձանձրանսւմ  
են այս հարցերն իրենց տալուց և բաւարար պատաս-  
խան չստանալուց: այդ պատճառով որոշում են այլիս  
չըրազուել նրանցով, քանի որ մարդու ուղեղը տիե-  
զերքի գաղտնիքը, հանելուկը լուծել չի կարող: Բայց  
այդպիսի որոշում կայացնողներն ստիպուած են խոս-  
տովանել, որ հէնց իրենք ամեն օր քանդում են այդ  
որոշումը. ամեն օր կեանքի հին, կնճոստ հանելուկը  
սփինքսի նման ցցուում է նրանց առաջ: Այն հարցը,  
թէ ի՞նչ է մարդը, ո՞րտեղից է գալիս, ո՞ւր է գնում,  
ո՞վ է բնակուում աստղագարդ երկնքում, մնում է ան-  
լուծելի, չնայած որ սկսած եղիպատական հիերօգլիֆ-  
նութեան գարից մինչև մեր օրերը մարդկութեան լաւա-  
ների գարից մինչև մեր օրերը մարդկութեան լաւա-  
ների ուղեղների ուղեղները տքնել և քրտնել են այդ  
գոյն զաւակների ուղեղները տքնել և քրտնել են այդ  
հարցի վրայ: Հայնրիխ Հայնէն այդպիսի հարցեր տուու-  
զին, որը պատասխան ստանալու է սպասում, անուա-  
զին, որը պատասխան ստանալու է սպասում, ու  
նում է պարզապէս յիմար: Սակայն ոչ այս ծաղրն ու  
հեզանանքը, ոչ էլ այն գիտակցութիւնը, թէ «Զգիտենք  
և չենք էլ կարող իմանալ» չեն կարող պոկել, հանել  
մեր սրտից այդ այրող հարցերը: Ծերացած, յոգնած  
և մահամերձ մարդն անգամ տեսնում է լսել այդ հար-  
ցերի պատասխանն ու յետոյ մեռնել:

Ահա այս պատճառով անհետքրթիր չէր լրու գոնէ իմանալ, թէ չորս հազար տարուայ մարդկութիւնն ի՞նչ պատասխաններ է տուել տիեզերքի ծագման մասին, ի՞նչ է ասում մեր ժամանակի գիտութիւնն այդ մասին. ի՞նչպէս են լուծում տիեզերական հանելուկը մեր ժամանակի մեծ մտածողները:

Հին Ազգերի Առաջպելների Տիեզերքի ԾԱԳՄԱՆ  
ՄԱՍԻՆ

Առասպեկն է այն հնագոյն ձևը, որով հին ապ-  
գերն իրենց աշխարհայեացքն են արտայայտել: Մարդ-  
կային մածողութեան և դէպի աստուածային էակ-  
ներն ունեցած հաւատի սկզբնական տարրերը խտացել  
են առասպեկլի մէջ մարդու բանաստեղծական պատկե-  
րաւոր երկարացութեան կարողութեան չնորհիւ: Բո-  
լոր նախնական ժողովուրդները, նոյն իսկ քաղաքա-  
կրթութեան ամենասատոր աստիճանի վրայ կանգնած-  
ներն ունեցել են տիեզերածնութեան վերաբերեալ  
առասպեկներ: Մոնղոլների, ազգեքների և այլ աֆրի-  
կական ցեղերի տիեզերածնութեան առասպեկներից մեղ  
հասել են միայն չնչին մասցըդներ, այն ինչ հնդիկ-  
ների, եգիպտացոց, բաբելացոց, հրէաների, պարսիկ-  
ների, յոյների և գերմանացոց առասպեկներն ընդար-  
ձակ են և ամբողջացած:

Քննելով այդ առասպեկտները՝ մենք նկատում ենք,  
որ մարդիկ իրենց ժամանակի աշխարհի երևոյթները  
դիտելով՝ եղակացրել են, թէ ի՞նչպէս պիտի լինէր  
տիեզերքը նոր կազմուելիս։ Նրանք աշխարհս զանա-  
զանակերպ ոյժերի գործունէութեան խառնուրդից են  
ծագած համարում։ Աշխարհի տարրերը առաջ խառ-  
նուած և խոնուած են եղել, իսկ այդ խառնուրդի  
ջոկջկելուց և նոր դասաւորումից դարձացել է աշ-  
խարհն ու կարգաւորուել։ Ընդհանրապէս բողբոջելու-  
և ծնուելու երևոյթը տիեզերքի ծագումը բացատրելու-  
մի միջոց է համարուում։ Ընդունուրեմ է, որ Քառի  
կամ Նախաջրի մէջ թաղուած են եղել յետագայում

հանդէս եկող արարածների սաղմերը. այսպէս է ըմբռնուած օրինակ եղիպտական, հնդկական և յունական առասպելներում: Երբեմն էլ աշխարհն ընդունուում է իրբե մի հնկայ ձու, որը թխուումօր տակ է դրած. այսպէս է պատկերացած պօլինեզեան կղզերնակների, փիւնիկեական և հնդկական առասպելներում: Այս պատկերացման հետքերը գտնում ենք ծննդ. Ա. գլ. 2ում, ուր որ ասած է «Եւ հոգի Աստուծոյ թխուէր») ի վերայ ջուրց»: Յունական առասպելի և փիլիսոփայութեան մէջ հանդէս են գալիս յաճախ անձնաւորուած վերացական մտքեր, որոնք ներգործական գեր են կատարում տիեզերքի ստեղծագործութեան մէջ. ինչպէս օրինակ. Էռոս սէրը, կամքը, միտքը, ներանձնեայ հայեցողութիւնը, ինչպէս հնդկական առասպելն է ընդունուում:

Առանձնապէս յունական առասպելներում բնութեան մէջ գործող ուժերը անձնաւորուում և աստուածային զօրութիւններ են նկատուում, երկինք, երկիր, ովկիանոս, սանդարամետ համարուում են աստուածային էակներ. նոյնիսկ աստուածային են խաւարը, լոյսը, օդը. և այսպէս բնական երևոյթներն անհնկատելի կերպով ընդունուում են իրեւ գործող աստուածային էակներ և դառնում են հաւատքի առարկայ: Այդ առասպելի մէջ աստուածները բնական ոյժերից բարձր, աշխարհին գերազանցօրէն տիրապետող էակներ չեն հանդիսանում, այլ նոյն բնութեան պատկանող էակներ: Նրանք էլ են բնութիւնից առաջացել:

\*) Հայերէն աստուածաշունչը սխալմամբ փոխանակ «թխուէր» զնելու «ըջէր» բառն է գործածել. երբայական բնագուում «թխուէր» է:

Ծանօթ. թարգմանչի:

Նրանք ծնուռում են քառակից, ծագել են սկզբնական նախավիճակից: Եղիպտական և հնդկական առասպելներում գիրագոյն աստուածը դուրս է եկել տիեզերական ձուից, որի վրայ սկսել է յետոյ իշխանութիւն բանեցնել: Աստուածների գործունէութիւնը մարդկանց աշխատանքին են նմանեցըել: Եղիպտոսում Խնուրմ աստուածը պատկերացուած է որպէս բրուտ, որ շինում է այն տիեզերական ձուն, որից ամեն ինչ առաջացաւ: Փոտախ աստուածը Մեմփիսում շինեց աշխարհս ինչպէս արհեստաւոր: Նոյն քաղաքի նայտ աստուածունին մանելով է տիեզերքն ստեղծել, ծննդոց զբքի մէջ Բ. 2 Եահնվէն հոլակոշտից իւր ձեռքով մարդ է շինում, նրա քթածակերից շունչ է ներս փչում, մի պարտէղ է տնկում. տղամարդու կողոսկրից կին է պատրաստում:

Սակայն բնութեան մէջ տեսնում ենք կողք կողքի թէ շինիչ և թէ քայքայիչ ուժեր. ողողումներ, հրաբուղիներ, ալեկոծութիւններ հանդէս են գալիս հրաբուղիներ, ամեն մի կարգի գէմ կուռող զօհուրեւ կատաղի, ամեն մի կարգի գէմ կուռող զօհութիւն: Բաբելոնական առասպելը երեակայում է, որ այս օրինակարգած տիեզերքն առաջացել է լուսաւոր աստուածների և մանաւանդ Մարդուքի ստորերկրեայ հրէշների գէմ մղած կոռուից: Ճիշտ նոյն ձեռվ յունական առասպելը պատմում է Զեսի և ոլիմպիական աստուածների տիտանների գէմ մղած ուսուի մասին: Աստուած և աշխարհ միմեանցից խիստ կոռուի մասին: Աստուած և աշխարհ միմեանցից չէին: Ամենից աւելի Հնդկաստանում պանթէիստական մտածողութեամբ աստուածն և աշխարհը սկզբնապէս մի մեծ միութեան մէջ միացած են ըմբռնուել. այդ նախնական անբաժանելի միութիւնից բաժանման և ստորաբաժանման միջոցով աստուածախանման միջոցով

ծային էակներ և երկրային-մարդկային զօրութիւններ առաջ են եկել: Հնդկաստանում արտայայտուած էր այն միտքը թէ՝ աշխարհը Սստծուց տարբեր երկոյթ չէ, այլ նրանում բովանդակուում է աստուածայինը: Բնդիակառակը՝ իսրայէլական կրօնը խիստ տարբերութիւն էր գնում աշխարհի և Աստծու միջև: Մոլուսական արարչագործութեան պատմութիւններն արտայայտում են պայծառօրէն մարդկարէների հաւատը դէպի Ասուծոյ գերբնական և տիեզերակալ ամենակարողութիւնը:

Տիեզերածնութեան վերաբերող առասպելները երբեմն համառօտ երբեմն ընդարձակ են մեզ հասել: Յաճախ միհնոյն ժողովրդի մէջ տարբեր առասպելներ խառնիխուուն անցնում են սերնդէ սերունդ, այդ պատճառով դժուար է ամեն մի ժողովրդի առասպելներն այստեղ առաջ բերել, այլ բաւականանում ենք միայն կարեւորները յիշելով: Այն փաստից, որ յաճախ բոլորովին տարբեր ժողովրդների առասպելներում նման տարբեր են հանդէս գալիս, սխալ կլինի հետեցնել թէ՝ ուրեմն ժողովուրդներն այդ մոտիւները միհնանցից փոխ են առել. ուղիղ կլինի այն միտքը թէ՝ տարբեր ժողովրդների մէջ նման երկոյթները նման պայմաններում առաջ են բերում նման առասպել և աշխարհայեացք. օրինակ տարածութեամբ այնքան հեռու ընկած երկրների և ժողովուրդների, պօլինէզեան կղզիների, Ֆինլանդիայի, Հնդկաստանի և Եգիպտոսի մէջ տիրում է այն աշխարհայեացքը, թէ աշխարհս գուրս է եկել մի տիեզերական ձուից, որի կեղեց երկու մասի է բաժանուել: Տիեզերական ձուից աշխարհ էի առաջ գալու այս միտքը այդքան հեռաւոր երկը-

ներում անշուշա միմեանցից անկախ է ծագել, և հաւանօրէն այն գիտողութիւնից, որ երկնակամարը ամեն տեղ մեղ ձուի կեղեցի պէս գոգաւոր է երկում: Մեզ համար տարակուսական է միայն այն, թէ ջրի մէջ բոլոր գոյութիւնների սազմերը թաղուած լինելու պատկերացումը Հնդկաստանում, Եգիպտոսում և Յունաստանում միհնանցից առ կամ է առաջ եկել, թէ այս ժողովուրդները մէկը միւսից փոխ են առել:

### 1) Պօլինէզիկաթի ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ

Պօլինէզիայում տիեզերածնութեան վերաբերեալ առասպելների տարբեր շերտեր ենք գտնում: Դրանցից մէկի համաձայն երկնքի նախնական բարձրագոյն Աստուած Թանգալօան իւր Պապա (երկիր) կնոջ հետ ծնել է ուղուած աստուածներին, որոնցից յետոյ լուսին և աստեղեր, ծովն ու քամին, և ի վերջոյ մարդիկն են սերուել: Մի ուրիշ աւանդութեան համաձայն սկզբում Աստուած ապրում էր մի փակուած խեցու կամ մի ձուի մէջ, երբ նա ձեղքեց այդ ձուի կեղեց երկուսի բաժանելով՝ կեղեցի մի մասից երկինքը՝ միւսից երկիրն առաջանակ կղզին աստուածներն երկնքում, իսկ նրանց ները ում էին աստուածներն երկնքում, իսկ նրանց ները ուրիշ աւանդութեան համաձայն սկզբում առաջացած աստուածային բըրտինքից առաջացաւ ծովը: Մի երրորդ աւանդութեան համաձայն սկզբում ապահովում էին աստուածներն երկնքում, իսկ նրանց ները ուրիշ էր տարածուած, բայց ցամաք չկար. այն քեզ ծովն էր տարածուած, բայց ցամաք չկար. այն ժամանակ Թանգալօան երկնքից ձգեց մի կտոր հողաշերտ, որից Թոնգա կղզին ձեացաւ և կամաց կամաց շերտ, որից Թոնգա կղզին ձեացաւ և կամաց կամաց ընդարձակուեց: Մի չորրորդ աւանդութեան համաձայն ընդարձակուեց:

գուրս քաշեց. բայց հազիւ թէ նամաքը կիսով չափ երկացել էր, երբ կտրուում է կարթի թելը, որով ցամաքի միայն մի մասը՝ այն էլ ծայրերը մնացին ջրից գոռքս։ Նոր-Զելանդիայի Մաօրիս կոչուած բնակիչների առասպելն ասում է, որ երկինքն ու երկիրը հազարաւոր տարիներէ ի վեր այնպէս էին ընկել իրարվրայ, որ ամեն ինչ խաւարի մէջ թաղուած էր մնում։ Այն ժամանակ նրանց որդիները վճռեցին նրանց միմեանցից բաժանել։ Այս բանը յաջողեցրեց անտառների աստուածը, իւր արմատներով երկիրը դէպիցած հրելով իսկ ճիւղերով երկինքը դէպի վեր. դըրանից յետոյ լուսաւորուեց և երկացին երկինքի և երկրի որդիները... բայց մինչև այժմ երկինքն ու երկիրը արցունք են թափում մշուշի և շաղի ձևով իրենց բաժանման առթիւ։

Այս առասպելներում մարդիկ յաճախ պատկերացուում են որպէս երկնային էակներ, բայց դրանք կրցրել են աստուածների բնակատեղին։ Այս առասպելների մէջ հանդէս է գալիս երեխայական երեկակյութեան հարստութիւնը։ Կղզիների ծովից գուրս ցցուելը, երկնքի գոգաւոր տեսքը առիթ են տալիս այս պատմուածքների հիւսուածքին։ Բայց ամեն տեղ Աստուածն ու աշխարհը բաժան չեն հանգէս գալիս. նրանք պատկանում են միմեանց, միւս կողմից մարդուն վերագրուում է աւելի բարձր աստուածային ծագում։

## 2) ԳԵՐՄԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Գերմանական տիեզերածնութեան առասպելները, ինչպէս աւանդուած են Եղդայի մէջ, պայմանաւո-

րուած են հիւսիսային կլիմայով։ Հիւսիսային գերման ցեղերը ըմբռնում էին հիւսիսի ցուրտ և հարաւուիների տարբերութիւնը։ Նրանք զգում էին հարաւուի երկրների կենդանացնող ջերմութեան ոյժը և հիւսիսային անցագաշտերի կարկամեցնող ցուրտը։ Եղդայում կան բազմաթիւ միմեանց նման աւանդութիւններ. դրանցից մէկումն ասուած է, «Կար ժամանակ, երբ այս բոլորը դեռ չկար, ոչ խիճ, ոչ ծով, և ոչ աղի ալիքները, ոչ ցամաք կար, և ոչ երկնի կամարը, ոչ մի կանաչ և ոչ անդունզը յօրանջող»։ Երկրի լինելուց առաջ կար Նիֆլիայմ (մշուշ) մի ցուրտ և խաւար տեղում, իսկ դրանից էլ առաջ կար հարաւում մի աշխարհ մուսպէհայմ անունով, որ տաք և լուսաւորքոցտ և այրող աշխարհ էր. հարաւի տաք և հիւսիսի սառը հանդիպեցին իրար. այն ժամանակ հալուող սառոյցի մէջ կեանք առաջացաւ. Ումիլը անունով հըսկան կազմուեց. հալուող սառոյցից ծնուեց Ալտհումլա կովը, որը լիգեց աղի սառցաժայուերը. Նրա լիգելուց գուրս է գալիս մի մարդ՝ Բյուլի անունով. սրա որդին Բէօուր ունեցաւ երեք որդի Օստհին, Վիլի և Վէ, աշխարհի իշխողները, որոնք սպանում են Ումիլը հըսկային և անդամներից աշխարհն էն ստեղծում։ ՃՈւմիրի մսից երկիրն ստեղծուեց, Նրա քրտինքից ծովը նրա ոսկորներից՝ լեռները, մազերից՝ ծառերը, գանգից՝ երկինք, յօնքերից բարի ոգիները ջինեցին Միտզարդ, բարեխառն գոտին մարդկանց որդիների համար, այնինչ նրա ուղեղից ստեղծուեցին խստաշռնչ ամպերը. Դրանից յետոյ Բէօուր որդիները ծովափին գտան երկու ծառ և նրանցից մարդ ստեղծեցին։ Օտէին տուեց նրան շունչ և կենդանութիւն, Վիլին՝ խելք և շաբ-

ժունութիւն, Վէս՝ կերպարանք, լեզու լսելիք և տեսա-  
նելիք։ Միտգարդը յատկացուեց մարդկանց բնակու-  
թեան համար, այնինչ աստուածներ իրհնց պալտու  
շնեցին Ասկարտում։

Բարելոնի և հնդկական առասպելի մէջ կարելի է  
դժունել նոյն հայեացքը, որի համաձայն աշխարհի  
ստեղծագործութեան համար իրրե սիւթ վերցուում  
ունի սպանուածի մարմին։ Այդ ստեղծագործութիւնից  
առաջ եղած սկզբնական դրութիւնը բացասումներով  
նկարագրելու ձեր գտնում ենք ծննդ. Ա. գլ. և բարե-  
լոնական հնդկական ու տուասպելների մէջ։ Հասկա-  
նալի է, որ այդ սկզբնական վիճակը, քսուը աւելի  
շատ բացասական քան դրական սահմանումներով կա-  
րելի է նկարագրել։ Հռովմէական բանաստեղծ Օվիտը  
(43 թ. ն. Ք.-17 թ. Ք. յ.) իւր Մետամորֆոգա գրքում  
բառու աւելի շատ բացասական քան դրական տուեալ-  
ներով է նկարագրում։

### 3) ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

Եգիպտոսի նախնական բնապաշտութիւնը գիտ-  
նականների և քուրմերի փիլիսոփայական մտածողու-  
թեան շորհիւ յետագյում զարգացաւ և դարձաւ  
համաստուածութիւն և մինչեւ իսկ միհաստուածութիւն։  
Եգիպտոսի տարբեր սրբավայրերում, նոյնիսկ շտա-  
նագամ նոյն սրբավայրում կարելի է գտնել կողք  
կողքի բազմաթիւ առասպելներ տիեզերածնութեան  
վերաբերեալ Դրանց բոլորի մէջ ընդհանուր է ընդու-  
նել, որ կեանքի սկիզբը նախաջուրն է, որը իւր  
մէջ բոլոր իրերի սաղմերն է պարտնակում։ Նեղոսի

տարեկան պարբերական ողողումից առաջացած ճոխ  
բուսականութիւնը հասկանալի է դարձնում մեզ, թէ  
ինչու նոքա վերոյիշեալ աշխարհայեազքը պիտի ունե-  
նալին։ Նրանց կարծիքով նոյնիսկ աստուածային  
էակների սաղմերը այդ նախաջուրի մէջն են եղել։

Այնուհետև ամեն մի սրբավայր պահել է աւան-  
դութիւն այն մասին, որ չէնց այդտեղ պաշտուած  
աստուածն ամենից առաջ է ծնուել այդ նախա-  
ջուր նունից։ Ամենից շատ պաշտուած արևի աս-  
տուած Ման գուրս է եկել իրրե թռչուն կամ իրրե  
երիտասարդ մի ձուից։ Հելեոպոլսի առասպելը իւր  
աստծուն՝ Տումին համարում է ամեն բանի սկզբնա-  
պատճառը, որը նոյնպէս նախաջրից տուաջացած պի-  
տի լինի։ Բացի գրանից նախաջրի մէջ էին թաղած  
Քուէր (երկիրը) և Նոււ (երկինք) աստուածներն իրար  
փաթաթուած։ Տումը բաժանում է այդ երկուսին ծը-  
նելով Շու ին (օդ) և Տէֆնէտին (ցող), որոնք նատին  
(երկնքին) բարձրացնում են երկրից վերև, որով արևը  
իւր շրջանն սկսել կարող էր, և որից յետոյ միւս աս-  
տուածներն առաջանալ կարող էին։ Հերմոպոլսի տ-  
ուասպելի համաձայն նոււ աստուած, որ նախաջրի մէջ,  
ծածկուած էր՝ տենչանք է ունենում ստեղծագործա-  
կան աշխատանքի։ Նա ջոկում է նախանիւթի մէջ միհա-  
ցած տարբեր և առաջացնում 4 միմեանց հետ սերտ կապ  
ունեցող աստուածային զոյգեր, Նուն և Նունէտ, Հէն և  
Հէնէտ, Քէր և Քէքէտ, Նէնու և Նէնուտ, որոնց նշա-  
նակութիւնը զժուար է որոշել։ Յամենայն զէպս պարզ  
է, որ այս բոլոր առասպելների հիմքը կազմում է պան-  
թէիզմը, Աստծու և աշխարհի միութիւնը։ Էմանցիայի  
կամ բղիման միջոցով նախագոյից, որը աստուածային

և մարդկային սաղմելը իւր մէջն էր ամփոփում, առաջացել են առանձին տեսակները:

#### 4) ՀԵՐԿԱԿԱՆ ԱՌԱՋՊԵԼ

Ամբողջ տիեզերքի մի ամըռողջից բղխելու վար-  
դապետութիւնը հնդկական առասպելի մէջ ամենից  
պայծառօթէն է հանգէս գալիս: Հին աշխարհի խորի-  
մաստ ժողովութել՝ հնդիկներն ամենից առաջ են խոր-  
հրդածել նախապատճառ նախագոյի մասին: ամեն մի  
կոնկրէտ երեոյթի վրայից անցնելով՝ անկերպարան  
վերացումների միջոցով՝ ձգտում էին գոյութեան նա-  
խապատճառն ըմբռնել: Ռիկվէդա սրբազան զրբում հան-  
դէս է գալիս Հնդիկ ժողովրդի հոկայ ծարաւը գէպի  
ճանաչողութիւնը, արտակարդ ոյժը վերացական խոր-  
հրդածութիւններին վերջապէս անկարող կասկածանքը:  
Այդ զրբում ասուած է, որ սկզբում ոչինչ չկար, բա-  
ցի անկերպարան գոյից, որի մէջ յանկարծ կերպա-  
ւորուելու տեհնչն է առաջ գալիս. այս կամքը գէպի  
կեանքը առաջ է բերել գոյութեան զանազան ձևեր:  
Բայց որտեղից էր համամիական նախագոյն՝ այդ ան-  
ըմբռնելի է. փիլիսոփայական խորհրդածութեան հա-  
մար ալդ գոն վերջին տուեալն է:

սաբ այդ ու եւ և և  
Նորագոյն՝ գարում՝ Շօպէնհաուէնը (1788—1860)  
տիեզերածառաթիւնն ըմբռնում է համաձայն վերոյիշեալ  
առասպեկի: Ոչ թէ մի ծրագրուած իմաստութիւն այս  
Ամբողջը կեանքի է կոչել, այլ այդ ամբողջի մէջ զար-  
թել է մի կոյր անբան կամք դէպի կեանք: Հնդիկ ա-  
ռասպեկի և Շոպենհաուէնի փիլիսոփայաթեան մէջ  
ընդհանուր է նաև այն, որ տիեզերքի ծագումը ամեն

տեսակ տանջանքի սկիզբն է համարուում։ Երբ բոլոր  
էակները յետ դառնան դէպի նախնական համամիու-  
թիւնը, երբ բոլոր հոգիները միանան աիեղերական ամ-  
բողջին, ամեն ինչ թոփանցող Բրահմային, միայն այն  
ժամանակ կարելի է փրկուել երջանկութեան հասնել

Որ մարդու հոգին տիեզերական Ոգու հետ մի մի-  
ութիւն է ներկայացնում հոգիկ մտածողութեան մէջ  
միշտ ենթազրուում է: Այս միութիւնն ըմբռնելն է ի-  
մաստութեան ծայրաստիճանը: Բոլոր էակների ազգակ-  
ցութեամբ ըմբռնելի է դառնում հոգեփոխութեան ու-  
սումը: Հոգկական աշխարհայեացքը համաստուածեան  
(պանթէլիստական) է, աստիճանական (էմանացիայի)  
բղիման միջոցով համամիութիւնից ծագում են առանձին  
էակներ: Պրայապատի աստուածը կամ հումամիութիւնը  
նախ ճամաչում է ինքն իրեն, յետոյ տենչում է ունե-  
նալ մի երկրորդ, այսպիսով առաջ է գալիս արուն և  
էզը: Արկվեգայի 90 զլ. ասած է, որ աստուածները  
զոհում են Պարուղային այսինքն այն նախազոյին, որը  
տիեզերքի հոգեկան և նիւթական բովանդակութիւնն  
է իւր մէջ պարունակում: Այդ Պարուղայից ծագում  
են Վէգայի երգերում իրեն կրօնի հիմք գովարանուող  
կենդանիների առանձին տեսակները: Երբ աստուած-  
ները Պարուղային կաոր կտոր արին, նրա բերանից  
ծագեց Բրահմանը, բագուկներից՝ պատերազմիկներ,  
սրունքներից՝ գիւղացիներ, ոտներից՝ չուտրա կամ նորտ  
գասակարգը, նրա հոգուց առաջացան լուսինը; աչքե-  
րից՝ արեր, բերանից՝ ինդրա և Ագնի աստուածները,  
շունչից՝ Վայու, պորտից՝ մթնոլորտը, գանդից՝ երկին-  
քը, ոտներից՝ երկիրը, ականջներից՝ աշխարհի կողմերը:

2382-54

օրէնսդրքի սկզբի մասերից պարզորոշ կերպով հանդէս է գալիս պանթէիստական աշխարհայեացքը: Այստեղ ասած է... Այս Ամբողջը պատաժ էր խաւարով, անտեսանելի էր, անմեկնելի, անձանաշելի, քանի որ քնի մէջ էր ընդմուռած: Այսուհետև յայտնագործուեց ամենակարող և ինքնիրենից առաջացող, անտեսանելի Աստուած և որպէսզի երեկի գառնայ, ստեղծեց այս Ամբողջը հինգ տարերի և մնացած բոլոր իրերի հետ միասին և խաւարը ցրեց: Եւ նա, որ զգայարանքների՝ փորձից դուրս է, որը անպատճառ, անտեսանելի և յաւիտենական է, յայտնուեց: Տարբեր արարածներ իւր սեփական մարմնից առաջ բերելու տենչով մղուած՝ նա ստեղծեց ամենից առաջ ջուր և նրա մէջ դրաւ մի սերմ, որը զարգացաւ և գարճաւ մի ոսկի, արեի պէս փայլուն ձու, սրա մէջ նա ինքը՝ իրեն Բրահմա, իրեր բոլոր տիեզերքների նախահայր՝ բազմից: Այս Աստուածը մի տարի այս ձուի մէջ հանգչելուց յիտոյ՝ ձեզեց միայն իւր մտածողութեան կարողութեամբ այն ձուն երկու մասին, Երկու կեղներից մէկով երկինք, միւսով երկիրը պատրաստեց, դրանց միջն տեղատորեց մթնոլորտը, աշխարհի չորս կողմերը և ջրի մշտական տեղը:

Հնդկական առասպեկի մէջն էլ աստուածայինն ու մարդկայինը սուր կերպով բաժանուած չեն: Վէդայի հին երգերում մարդիկ և աստուածները վստահութեան և բարեկամութեան յարաբերութեամբ կապուած են հանդէս գալիս: Հնդիկ փիլիսոփայական մտածողութիւնը այս հիման վրայ ըմբռնում է Ամբողջը թափանցուած աստուածայինով: Յաւիտենական և աստուածային ոգու մի շունչն է մարդկային հոգին:

Աստծու և տիեզերքի սկզբնական անբաժանելի միութիւնից, Աստուած-բնութիւնից, ինչպէս Գէօթէն կառէր, առաջացել են այս բոլորը:

### 5) ՅՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

Յունաստանում շրջում էին աւանդաբար բազմաթիւ էապէս իրարից ոչ շատ տարբեր առանձիներ: Հնդկաստանի և եգիպտոսի հման այստեղ էլ բնութեան ուժերը չեն տարբերուում աստուածային էակներից: Ծագման կամ ծննդեան շնորհիւ նախագոյութիւնից առաջացած են համարուում տարբեր էակներ, երկինք, երկիր, գիշեր, խաւար, օդ, ովկիանոս սանդարձամեատ. իսկ յետոյ՝ նոր աստուածային սերունդներ. բայց համապատասխան յոյնի կոնկրէտ մտածելու և պլաստիկ աշխարհայեացքի առանձին աստուածային էակները պարզորոշ սահմանումներով են պատկերացուած: Այդ էութիւնները հաստատուն ձեր են ըստանում բանաստեղծութեան և ճարտարարուեստի շնորհիւ, այնինչ Հնդկաստանում ամեն ինչ թափանցող անզանազանելի Միութիւնն աւելի է շեշտուում: Հոմերոսը մի տեղ (Իլիական XIV հագ. մէջ) պատահարար ովկիանոսը համարում է հայր և սկիզբն ամենայն իրաց և աստուծոց. նա է ծնել աստուածներին մայր Թէտիսի հետ: Հին Օրֆիկների առասպեկները (սրանք մի կրօնափիլիսոփայական եղբայրութիւն էին, որոնք իրենց ծագած էին համարում Որփէս անունով առապեկան երգչից) աւանդում են, որ խաւարից է ամեն ինչ առաջացել:

Աւելի մանրամասն տիեզերածնութեան վերաբե-

լեալ առասպել գտնում ենք Հեղիոդի «Թէոգոնի» գրքում (VIII դարում Ք. ա.): Հեղիոդն սկիզբը համարում է քառս, անդանազանելի խաժամուժը, որից առաջացաւ երկիրը, տարտարոսը և երոսը (սէրը). քառսից առաջացան գիշերն ու խաւարը, որոնցից եթերն ու ցերեկը, երկիրն առաջ բերեց երկինքը, լեռներն ու ծովերը: Երկնքի ու երկրի միացումից առաջացան տիտաններ, որոնցից ամենաուժեղը Կոռնոսը իւր հայր Ուրանոսից իշխանութիւնը կրեց. սակայն աստուածների աւելի նոր սերունդ Զևսի գլխաւորութեամբ յաղթում է Կոռնոսին և տիտաններին, և տարտարոս ձգում: Տիտանները անձնաւորացումն են բնութեան կոպիտուժերի: Առասպելը տօնում է տիեզերքի բանական կարգաւորութեան յաղթանակը կոյր ուժերի վրայ: Հաւանօրէն երկրաշարժներն ու, հրաբխային բռնկումներն են տուել այս առասպելին որոշ գոյն: Պատմագիր Աքուզիլասոսի մօտ Հեղիոդի աշխարհայեացքն ենք գտնում, որը քառսից խաւարն ու գիշերը առաջ եկած է համարում, եթերից՝ սէրն ու միտքը: Ֆերեքիտէս փիլիսոփան ամենից առաջ մի երրորդութիւն է ընդունում Զևս, Կոռնոս և երկիրը. Կոռնոսն իրենից առաջ է բերում կրակ, օդ և ջուր. Զևսը երոսի է ձևափոխում և դառնում դրանով տիեզերաշէնքի նպատակը: Ք. ա. VII դարում ապրող իմաստուն հպիմենիէսի մօտ հանդիպում ենք եգիպտական և հընդկական տիեզերական ձուին: Սրա ասելով՝ օդն ու գիշերը առաջացել են տարտարոսից. իսկ այդ երկսեռ խառնուրդից ստացուեց տիեզերական ձուն, որի մէջ ամփոփուած էին բոլոր արածների սաղմերը: Նոր օրֆիկների առասպել-

ներում կոռնոսն է համարուում սկիզբը. նրանից ծագեցին եթերն ու քառսը. սրանցից ստացուում է տիեզերական ձուն, որը աստուածութիւններն էր իր մէջ ամփոփում. այն ինչ մի ուրիշ օրֆիկական առասպելի համաձայն բոլոր իրերի սաղմերն ամփոփուած էին նրա մէջ, որից և ամեն բան՝ նոյնիսկ տիեզերքը կերտող Զևսն է գուրս գալիս: Պարզ է, որ օրֆիկները հնդիկների նման պանթէիստական մտածողութեան համաձայն համարում էին կեանքի ամեն ինչ թափանցող հեղեղը աստուածային. առանձին աստուածները կորչում են ընդհանուր աստուածայինի մէջ:

#### 6) ԲԱԲԵԼՈՆԱԿԱՆ ԱՌԱՄՊԵԼ

Եգիպտական և հնդկական այն նախաջրին, որից առաջացել է ամեն ինչ, հանդիպում ենք մենք բաբելոնում, որն այստեղ Տիամատ է անուանուում. Այստեղ էլ ինչպէս Հեղիոդի մօտ նախավիճակից առաջանում են աստուածային սերունդներ, որոնք միմեանց հետ կուռչում են: Ք.ա. 668—626 թ. իշխող Ասորեստանի թագաւոր Ասուրբանիրալի հիմնած նինուէի մատենադարանում բեւեռագիր աղիւների վրայ պահուած է հնագոյն ժամանակների սրբազն աւանդութիւնների հատուկտորի հետ նաև մի բաւական մեծ հատուած Բաբելոնի տիեզերածնութեան առասպելից.

Դրա համաձայն նախաջուր-Տիամատից ծնուռամ են աստուածներ: Տիամատ երկիւղ է կրում, որ գըրանք իւր իշխանութիւնը կիւին, որովհետեւ նրանք տիեզերքի մէջ կարգաւորութիւն են առաջ բերել ուղում, այն ինչ Տիամատն ուզում է պահել քառսա-

յին, խաժամուժ վիճակը, աստուածներից մի մասը միանում է Տիամատին, իսկ միւսները լոյսին կարգաւորութեան աստծուն: Տիամատը զինուում է պատերազմիլու, սարսափելի ճիւաղներ է ստեղծում իրեն օդնող՝ հսկայական օձեր սուր ատամներով, ուռած փորով կատաղի վիշապներ, մի կատղած շուն, մի կարիճ-մարդ, մի մարդածուկ և մի խոյ, սարսափելի զէնքերով զինուած այս հրէշները պատերազմից չեն վախենում, թշնամուառաջ անյաղթելի են: Վերեի աստուածները երկիւզով պաշարուեցին Տիամատի առաջ, միայն գարնան և Բարեկոն բաղաքի աստուած Մարդուք յոյս ունէր Տիամատին յաղթելու: Եթէ յաղթի՝ միւս աստուածները խոստանում էին նրան համարել զիխաւոր աստուած: Ապա Մարդուքը վերցնում է իւր աղեղը, կապում է սուրը մէջքին, ձեռք է բերում կայծակը և մի հսկայական ցանց՝ Տիամատին իւր ճիւաղների հետ բռնելու: Նա ստեղծնց նաև վիշապ քամուն իրեն օգնելու. ապա բարձրացաւ իւր պատերազմական կառը: Տիամատը երբ այս տեսաւ, բարձրածայն գոռաց, այն ժամանակ Մարդուքը հրամայեց վիշապ քամուն, որ վշի նրա բերնի մէջ. այսպէս էլ եղաւ: Նա նրա որովայնը լեցրեց սարսափելի քամիներով, այնպէս որ վերջինս համարեա ուշագնաց եղաւ: Դրանից յետոյ Մարդուքը իւր սուրը մխեց նրա մարմնի մէջ, կտրտեց նրա փորոտիքը և նրա գիշակը զէն ձգեց: Տիամատին օգնող աստուածները սասանում, թողնում փախչում են, բայց միւս ճիւաղների հետ ցանցում բռնուում են: Այնուհետև նա Տիամատին բաժանում է երկու մասի. մէկից պատրաստում է երկնային կամարը և մի սողնակ էլ առաջն է քաշում,

որպէսզի ջրերը դուրս չթափուին, միւսը մասից երկիրն է պատրաստում երկնքի գէմ յանդիման: Այս նկարագրութիւնը յիշեցնում է ծննդոց Ա. 7—14 պատմուածքները: Բարեկոնական առասպեկլի հետեւալ հատուածը կորած է, ուր հաւանօրէն պատմուած կլինէր ծովի և ցամաքի բաժանումը և կենդանիների առաջ գալը: մնացել է մարդու ստեղծագործութեան պատմութիւնից մի հատուած, որի համաձայն Մարդուք աստուածներից մէկի գուսիր կտրում և նրա արիւնից և հողից շաղախ պատրաստելով մարդ է շինում:

Բարեկոնական այս առասպեկլը հաւանօրէն առաջ է եկել ալեկոծութեան կամ ջրհեղեղի տեսարաններից ինչպիսին Միջագետքում յաճախ էր հանդէս գալիս: Մի կատաղի ալեկոծութիւն կարող է առաջ բերել այս հայեցքը, թէ ծովի խորքերի հրէշները կոռուում են ամեն կանոնի զէմ. կամ ով որ ջրհեղեղի ականատես է եղել, մի գաղափար կունենայ Ջրի յորձանքների կործանող ոյժի մասին. նրան կլուայ թէ՝ ամեն ինչ սկզբնական քառսի է վելածուում:

Հին ժողովուրդների մանուկ մտածողութիւնը անձնաւորացնում է բնութեան ամեն մի երեսյթ: Մենք հասկանում ենք սակայն, որ զրանք զաաարկ երեսկայութեան արդիւնք չեն, այլ բնութեան երեսյթների դիտողութիւնն ու խորհրդածութիւնը այս ձեերով հանդէս են գալիս:

Այս առասպեկլը գարնան արեի յաղթանակն է տօնում խառնիխուուն յորձանք տուող ջրերի վրայ, միեւնոյն ժամանակ զովաբանում է Բարեկոնի գերիշ խանութիւնը նրա հարեան ցեղերի վրայ, քանի որ Բարեկոնի Մարդուքը իւրեւ բարձրագոյն աստուած միւս աստուածների վրայ գերիշնող է դառնում:

### 7) ՓԻՒՆԻԿԵԱՆ ԱՌԱՍՍՊԵԼՆԵՐ

Փիւնիկեական տիեզերածնութեան վերաբերեալ առասպելները մեզ հասել են երկրորդական աղբիւրներից։ Դրանցից մէկի համաձայն գոյութիւն է ունեցել անսահման ժամանակներից ի վեր օդեղէն շունչ կամ հոգի և խաւար քառու. յանկարծ հոգու մէջ մի ցանկութիւն է առաջ գալիս, իսկ դրանից առաջ է գալիս նախատիղմը, որը ամեն բանի սաղմերը պարունակում էր իւր մէջ. այս տիղմը փոխակերպուում է տիեզերական ձուի. այս ձուից ծագում են լուսաւորները ապա կենդանիները և վերջը մարդիկ։ Մրա Ս. գրքի աւանդութեան հետ (ծննդ. ա. 2) ունեցած նմանութիւնը պարզ նկատելի է... Փիւնիկեական մի ուրիշ աւանդութեան համաձայն ցանկութիւնից և մշուշից ծնութեմ է նաև օդի շունչը, որը ձեսփոխուում է տիեզերական ձուի։ Եթէ ի նկատի ունենանք, որ փիւնիկեական և բարելունական կուլտուրաները իսրայէլականի հետ և՝ աշխարհագրականորէն և՝ պատմականորէն անընդհատ շփման մէջ էին, այն ժամանակ հասկանալի կը լինի թէ ինչու այս ժողովուրդների տիեզերածնութեան առասպելներն այնքան նման և ընդհանուր գծեր ունին։ \*)

### 8) ԻՄՐԱՅԷԼԻ ԱՌԱՍՍՊԵԼՆԵՐ

Ծննդոց գլքում երկու տարբեր տիեզերածնութեան վերաբերեալ աւանդութիւններ ենք գտնում։

\*) Տես այս առասպելների աւելի լուսաբակ համեմատութիւնը Դ-ր. Մ. Խոստիկեանի «Ի՞նչ է Աստուածաշունչը» աշխատութեան 25—28 էջ։

Հնագոյնը դրանցից, որը հաւանօրէն Ք. ա. VIII կամ IX դարում է գրի առնուել, ամփոփուած է ծննդոց Բ. 4 համարի և շարունակութեան մէջ։

Եահուէն այստեղ հանդէս չէ գալիս իրրեւ բարձր հոգեղէն էակ. նրա գործունէութիւնն ունի աւելի մարդակերպ բնոյթ։ Նա իւր սեփական ձեռքով հողակոյտից մարդ է պատրաստում. նա կեանքի շունչ է փչում նրա քթածակերից. իւր շինած սարդու կողից կին է պատրաստում, իսկ բաց մնացած տեղը մսով է ծածկում։ Երևոյեան զովին դուրս է գալիս իւր գրախտում զբօննելու, որը մարդու համար բնակատեղի էր նշանակել։ Զրից աղքատ Պաղեստինում այս պատմութիւնը, մանաւանդ նրա սկիզբը, շատ հասկանալի է։ Եթէ անձրեւ չի գալիս Պաղեստինում, ոչ մի բոյս էլ չի բուսնում, իսկ անձրեւ գալրու գէպքում առաջ է գալիս ճոխ բուսականութիւն։ Երկրորդ աւանդութիւնը, որն ամփոփուած է ծննդոց Ա. զլիսում, ուր խօսք է լինում նախաջրի մասին, հասկանալի է հեղեղութեառով առատ Եփրատի և Տիգրիսի հովիտներում։ Այս երկրորդ պատմութիւնը համեմատաբար աւելի նոր ծագում ունի իսրայէլում։ Մարդն այստեղ աւելի լրջացած, հասկացող և լուսաւորուած է։ Պատմողն ուզում է պարզել երկնքի, երկրի, արևի և լուսնի առաջ գալը. Աստուած մարդակերպ չի հանդէս գալիս, այլ վսեմացած հոգեղէն է պատկերացուած։ Հնչում է «եղիցին», սրան հետեւում է «և եղել», այս այսպէս լինելով՝ այս աւանդութիւնը չունի արևելեան վառ երևակայութեան գոյները, որով տոգորուած են բարելական և յունական առասպելները. այստեղ չկայ նաև դրախտի կեանքի վառ նկարագրութիւնը, որովնախնական մարդու դրախտային երջանկու-

թիւնն է պատկերացուած առաջին աւանդութեան մէջ: Այս երկրորդի մէջն աւելի շուտ հանդէս է գալիս ընութիւնն ըմբռնելու այն փորձը, որով Յունաստանում յունական ընափիլիսոփաներն աչքի էին ընկնում:

Մարդն այստեղ փորձում է ըմբռնել այն գաղտնիքը, որով Աստուած քառսից տիեզերքը պատրաստից: Ակզրում, երբ Աստուած աշխարհն ստեղծեց—ասած է այս Բ. աւանդութեան մէջ—երկիրն էր անպատրաստ և գատարի, խաւարն ընկած էր ովկիանոսի վրայ և Աստուծոյ հոգին թուխս էր նատած ջրերի վրայ.—այն ժամանակ Աստուած ասում է, թող լինի լոյս և եղաւ լոյս: Այստեղ էլ ինչպէս Բարելոնի, Փիւնիկիայի եղիպտական և յունական առասպելների մէջ քառս սկիզբն է ընդունուած, որն իրրե ջրերի կուտակումն է ըմբռնուած: Այս աւանդութիւնը չի փորձում պատասխանել այն հարցին թէ՝ որտեղից քառսն առաջացաւ. ճեղինակի վերացական ոյժը դրան չի համում: Քառս նկատուում է իրբե սկզբնական տուեալ: Այստեղ «ոչ չընչից» սակեդելու մասին խօսք չկայ. ընդհակառակն Աստուած ստեղծում է աշխարհ անկերպարան տիեզերանիւթից, քառսից, որը նոյնանում է ովկիանոսի (Թհօմի) հետ կամ որ նոյնն է Բարելոնական Տիամատի հետ: Իսրայէլացիք այս տիեզերածնութեան առասպելը վերցրին Բարելոնից, բայց այդ վերամշակեցին մարդարէական դառւած կրօնի ոգով. նախաջրերի վրայ թուխս նատող Աստծու Ոգին ունի իւր զուգանեսականը միւս ժողովուրդների առասպելի մէջ: Պարզ է, որ այդ առասպելը իսրայէլական առասպելի մէջ, ուր այդ կամ որ նոյն է առաջարարացը իւր զարի աշխարհայեցքին մարդութիւն կազմող էլ յաջող չի յարմարացը իւր շարունակութիւն կազմող հատուածի հետ, ուր Աստուած իւր ամենակարող խօս-

քով տիեզերքն է ստեղծում: Այս հատուածի փոխարէն հնումը եղել է անշուշտ այն աւանդութիւնը թէ, թուխս նստող աստուածային Ոգու տակից դուրս հն եկել առանձին աստուածութիւններ և էակներ, որոնք բաժանուել, առանձնացել են նախաջրից: Այս տեսակի տիեզերածնութեան պատմութիւնն անշուշտ մարդարէական գտուած կրօնական ոգուն յարմար չէր գալիս, այդ պատճառով վերամշակուեց:

Այստեղ աչքի է ընկնում իսրայէլական կրօնական մտածողութեան զարգացումը, հանդէս է գալիս մարգարէների հաւատը դէպի Աստծու տիեզերակալ ոյժը, անհետացել է այն տեսութիւնը, որով իրը թէ Աստուած կու է մղել աստուածային կամքին հակառակող ջրեղէն զանդուածի և զօրութիւնների դէմ: Այս առասպելական պատմուածքները գուրս ին սպրաել մի քանի բանաստեղծական հատուածներում, օր. ՃԴ սաղմ 6—7 և մնդ. Եսայի ԾԱ. 9—10, ուր ասած է. «վեր կաց, վեր կաց, զօտեպնդուիր ուժով, Եանուէի բազուկ, վեր կաց ինչպէս հնագոյն ժամանակներում հնագոյն սերունդների օրով. դու չէիր, որ Անագնին ջարդեցիր և վիշապ օձին մահացրիր»: Սա նոյն է, ինչ որ բարելոնական առասպելի մէջ, ուր ծովային հրէշը երկսի է բաժանուում և ջրերի կատաղութիւնը սանձահարուում է:

Կրօնապատմական կրթութեան պակասութիւնից է, որ ասաջացել է ս. Գրքի անսխալականութեան տեսութիւնը, գրանից է, որ չեն նկատել, թէ այս ստեղծագործութեան պատմութեան հեղինակի բնագիտական տեղեկութիւնները միայն իւր զարի աշխարհայեցքին համապատասխան կարող էին լինել: Բնական և հաս-

կանալի է, որ այդ հեղինակը հին դարի մտածողութեան համաձայն՝ երկիրը տիեզերքի կեղրոնն է համարում. երկինքը նրա համար մի հաստատուն կամար է, որի վրայ լուսաւորները իբրև ջաներ հաստատուած են: Այդ պատճառով նրան ընական էր թուում, որ արել, լուսինն ու աստղերը, երկրի ստեղծուելուց երեք օր յետոյ միայն առաջացել են՝ այն էլ միայն երկիրը լուսաւորելու և օրուայ ու տարուայ սահմանները որոշելու: Նորագոյն երկրաբանների ընդունած բազմաթիւ դարաշըանների մասին նա անշուշտ գաղափար ունեցած չէր լինի: Այս պատմուածքի կրօնական արժեքը դէպի Աստծու տիեզերակալ և բացարձակ ոյժի ճանաչողութեան մէջն է: Ինչքան որ իւր ժամանակի համար հնարաւոր էր, նա ընագիտօրէն բաւական ճիշտ և խոր հայեացըներ է ունեցել տիեզերքի ծագման գաղտնիքի վրայ: Օրինակի համար՝ մեր ժամանակի ընագիտական մտածողութեան համար կատարելապէս ուղիղ է նկարագրուած նախ ցամաքի և ջրի բաժանուելը, ապա բոյսերի, ծովային կենդանիների, թըռչունների, վայրենի և ընտանի կենդանիների երևան գալու կարգը: Խոկ ամենից վերջը մարդն է հանդէս գալիս իբրև արարչագործութեան վերջաբանը: Նորագոյն երկրաբանութիւնը հաստատում է որ մօտաւորապէս այսօրուայ աշխարհն այդ կարգով է ստեղծուել: Որ ճննդոցի հեղինակը գաղրդաբար չէր կարող ունենալ այն միջոնաւոր գարեշըանների մասին, որոնք անցել են՝ մինչև մի նոր շրջան է սկսուել և մի նոր երեոյթ առաջ եկել. պարզ է, քանի որ նա պարզապէս սովորական օքերի մասին է խօսում: Այն միտքը թէ եօթներորդ օրում Աստուած յոզնած էր և հանգստա-

նում է՝ անհամապատասխան է մեր աշխարհայիւսքին: Այս աւանդութեան մէջ ուլսման նկատուում է այն բնագիտական զարգացումը, որի համաձայն տիեզերքն աստիճանաբար է առաջացել, բայց սրանից աւելի աչքի է զարնում կրօնական մտածողութեան յառաջիւսղացութիւնը. այն է՝ բնութիւնն ու պատմութիւնը կառավարում է Աստուած: Աստծու ստեղծագործող կամքը, որը մի ժամանակ Ամբողջն է ստեղծել, կառավարում է տիեզերքը. երկնքում և երկրում մի ուրիշ ոյժ չկայ, որ նրա իշխանութեան ընդիմակայաց. սա է Խորայէլի կրօնական վերանորոգիչների՝ մարգարէների հաւատը: Այնինչ հին խորայէլական հաւատն այն է, որ Եահուէի ոյժը մինչև իրենց հայրենի սահմաններն է համանում. դրանից միւս կողմը իշխում են միւս ժողովուրդների անստուածները: Յաղթում էր Խորայէլը, դա մի նշան էր համարուում, որ թում էր Խորայէլը, դա մի նշան էր համարուում, որ մի օտար աստուած աւելի ուժեղ է եղել: Միայն մարգարէներն էին, որ առաջին անգամ պարզ կերպով այն միտքը յայտնեցին, թէ բոլոր ժողովուրդներն Աստուծոյ ճեռքին գործիր են, բայց ոչ նրա կամայականութեան խաղալիկ. այլ նա իրաւունք և արդարութիւն ականատես Ամովս, Եսայի երեմիա և Բ. Եսայի մարգարէները: Այս գիտական պատմական եղակացութեան հասան նրանք մի ուրիշ տուեալի հիման բաղզութեան ականատես Ամովս, Եսայի երեմիա և Բ. Եսայի մարգարէները: Այս գիտական պատմական եղակացութեան հասան նրանք մի ուրիշ տուեալի հիման բարձրացութեան հաստած արարչագործութեան վրայ. այն է այս Աստուածն է արարչագործութեան տէրը: Այն Աստուածը, որ անհնազանդ տարրերին կարգի տակ է գրել. կարող է ժողովրդների գէպի մի-

մեանց ունեցած կատաղութեանն էլ վերջ դնել և իրաւունք հաստատել: Բնութեան և պատմութեան մէջ միաժամանակ գտնում և ցոյց հն տալիս մհծ մարգարէներն ու սազմոսերգուները Աստծու ամենակարողութեան ապացոյցները: Մարգարէների դէպի տիեզերքի վրայ իշխող, բայց տիեզերքից անջատուած, ամենակարող Աստուած ունեցած հաւատի կլասիք արտայայթիւնն է ծննդոց Ա. գլխի ալբարչագործութեան պատմութիւնը, այնինչ հնդիկ առասպեկտերն այն հաւատի արտայայտութիւնն են, որի համաձայն Աստուած և տիեզերքը ազգակից են:

### 9) ՊԱՐՍԿԱԿԱՆ ԿՐՈՆ

Բարձր աստիճանի վրայ է կանգնած Զրադաշտի քարոզութիւնների վրայ հիմնուած պարսկական կրօնը: Թէպէտ նրանում բարի և չար աստուածները—Անուրա Մազդան (Արմիզդ) և Անգրոմայնիու (Անրիման)—միմանց դէմյանդիման են կանգնած, որոնցից իւրաքանչիւրն իրեն ստորագանուած ոգիներ ունի, բայց այս երկուութիւնը միաստուածութեան է մօտենում, որովհետեւ ընդունուում է, որ միայն Անուրա-Մազդային և նրա ստորագաս էակներին հարկաւոր է պաշտել և բացի դրանից լերջ ի վերջոյ բարի Աստծու յաղթանակ չար ոգիների վրայ ապահովուած է: Գերագոյն իշխանութիւնը Անուրա-Մազդային է պատկանում: Նա պիտի յաղթի չարին աշխարհի վերջին: Զրադաշտի կրօնի բարոյական ազգակցութիւնն իսրայէլի կրօնի հետ երեխ հրէաներն ըմբռնել էին, որ զրադաշտական կիւրոսին ներկայացնում են իրրե Աստծու ծառայ և Աստծու օծիկալ. (Ե-

սայի ԽԴ. ԽԸ. ԽԵ 1-4), նորա արշաւանքներն ու յաղթութիւնները բարձրեալ Աստծու անունով և յանձնալարութեամբ կատարուած էին համարուում:

Զրադաշտի քարոզութեան համաձայն Անուրա-Մազդան աշխարհի ստեղծողն է: Նա է ստեղծել մարդու և տիեզերքի մէջ ամեն բարի բան: Եթէ այդպէս է, հապա մրտեղից առաջացան չարն ու չարիքն և մեղքը: Աշխարհիս վրայի չարը Անրիմանի գործն է: Ամեն աեղ, ուր Անուրա-Մազդան բարիք է ստեղծում, Անրիմանը զրա դէմ չարն է ստեղծում, որով աշխատում է բարին ոչչացնել: Վատ երկիր, վատ կլիմայ, թունաւոր միջատներ, զիշատող գագաններ, հիւանդութիւններ, վատ ցանկութիւններ և մեղքեր, ահա սրանք են նրա ստեղծածը: Անսուղարեցութիւնն է նրա նպատակը, ամեն ինչ որ չոր է ու անսպատ, ճահիճները, քարքարուտները զրանք չար ու գիների բնակալայրերն են: Բայց Անուրա-Մազդան իւր հակառակորդից աւելի ուժեղ է: չարի թագաւորութիւնը պիտի կրօճանուի: Պարսկական յետագայ գաւանաբանութիւնների ունենալու համաձայն աշխարհը 12000 տարի պիտի գոյութիւն ունենայ: Ամենից առաջ Արմիզդ կամ Անուրա-Մազդան ստեղծեց իւր երկնային աշխարհը, որը 3000 տարի Անրիմանից աղատ մնաց: Այսունեակ Անրիմանը տեսնում է այդ լուսաւոր աշխարհը և յարձակուում է նրա վրայ ոչընչացնելու համար, բայց Արմզդի ոյժը աւելի մհծ էր: Նա առաջամար, զրայց Արմզդի ոյժը աւելի մհծ էր: Նա առաջամար կամ վերջնական ճակատամարտը 9000 տարուց յետոյ մղել, այդ ժամանակաշրջանում բարին ու չարը պիտի խառնուին իրաբ: Արմիզդն առաջուց գիտէ, որ իւր արարածներն աւելի գորեզ կլինեն քան

Ահրիմանի ստեղծածները. բայց վերջնական վճռական ըոպէն դեռ չի եկել:

Զբաղաշտի քարոզած կրօնը զօրեղ մի կրօն է. մարդիկ կոչուած են այս կուում ոչ թէ անտարբեր հանդիսատես լինելու, այլ նրանք պիտի աջակցեն Որմիդդի գործին. նրանք Աստծու գործակիցներ պիտի լինին: Բոլոր գրական երևոյթները՝ կետնքն ու քաղաքակրթութիւնը՝ երկրագործութիւնը, որդենութիւնը, մաքրութիւնը, ճշմարտութիւնը, հաւատարմութիւնը և բարեգործութիւնը սրանք բոլորը նրա գործն են: Այս առնական զօրաւոր կրօնը, որը ամեն մի քաղաքակրթական աշխատանքի մէջ է տեսնում Աստծու իսկական պաշտամունքը, սուր կերպով հակաղբուում հնդկական խորհրդածող կրօնին, որը ամենաբարձր բանը համարում է ծուլաբար խորասուզուել Համամիութեան՝ Բրահմայի մէջ:

## II.

## ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախորդ գլուխներում մենք տեսանք, որ հինգողուրկները զարմանալի խոր և ուղիղ իմացութիւններ են հանդէս բերել տիեզերածնութեան առասպելներում: Քաղաքակրթութեան մէջ աւելի բարձր ժողովուրդներն աստիճանաբար անցնելով այս աստուածային ֆանտազիայի լարաշրջանից՝ զարգացրին խիստ գիտական աշխարհայեացը: Առասպելաբանութեանը հետեւեց փիլիսոփայութիւնը, որի մայրենի հողը միւթօլոգեան է: Փիլիսոփայութիւնն աստիճանաբար բաժանուեց նրանից և նրա վերաբերմամբ ազատ և ինքնանկախ դարձաւ: Այս երևոյթը նկատելի է և Հնդկաստանում:

### 1. ՅՈՒՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՏԻՒԹԻՒՆՆԵՐ

Յունաստանում Թաղէս Միլէտացու օրերից (600) սկսուեց ատասպելներից և դիւցազներգութիւններից մի կենսուրախ փիլիսոփայութիւն, որը խիզախօրէն առաջ նետուեց տիեզերական վերջին: Գաղտնիքների վրայ լոյս սփոկելու: Ազգբնական շրջանում զլիսառապէս փորձում են ըմբռնել նիւթական աշխարհի գոյացութեան և ծագման սկիզբը: Միայն Սոկրատէսից

սկսուած (469—399) հայեացքն ուզգում են դէպի ներսը. պարզօրէն գիտակցուում է մարդկային հոգու գերազանցութիւնը նիւթի վերաբերմամբ: Մինչ առաջին շրջանի բնափիլիսոփոսները ամբողջ երկրի սկզբնապատճառ նախական նիւթն էին համարում և հետախուզուում, Սոկրատի մեծ աշակերտ Պղատոնն ընդունեց, որ ճշմարտութեան, բարւոյ և գեղեցկութեան աշխարհը միայն մի բարի իմաստուն Արարչից առաջանալ կարող է:

Հնդկական, եգիպտական և յունական առասպեկտների համաձայն Թաղէսն ընդունում էր, որ ջուրն է այն նախապատճառ նիւթը, որից ամեն ինչ աստիճանաբար պատճացել է: Բայ ամենայնի վստահելի տեղեկութիւններ չեն մնացել այն մասին, թէ ի՞նչպէս է նա աշխատել իւր այս հայեացքը հիմնաւորել:

Ք. ա. VI գարում պարող Անաքսիմանդը ընդունում էր մի նախանիւթ, որը թէպէտ մեղ ծանօթ նիւթերից տարբեր, բայց նրանց բոլորի հիմքն է կազմում. դրա նման մեր ժամանակի քիմիան յաճախ 70—80 ծանօթ տարբերի հիմքը կազմող մի նախատարը է ենթաղըում: Անաքսիմանդը այս հիմնական նիւթը անուանում էր անսահմանը, որն ինքն իր մէջ շարժուում է, կենդանի է և հիմքն է կազմում աշխարհիս ամբողջ կեանքի: Այնունեան բաւական երախայամիտ կերպով փորձում էր նա ամենից առաջ տիեզերական մի հեղուկ նիւթի, ապա երկրի, օդի, լուսաւորների և նրանց շարժումների ծագումը այն անսահման հիմնանիւթից բղխեցնել:

Նրա բարեկամն ու աշակերտը Անաքսիմանէսը կարծում էր թէ՝ օդն է նախանիւթը, որովհետեւ օդի

ներշնչումն ու արտաշնչումը բաւական հիմք էր համարում ընդունելու, որ մարդկանց և կենդանիների կեանքի պատճառը նա է: Համայն տիեզերքը համարում էր նա իրը կենդանի էակ: Այս հայեացքը բնափիլիսոփաների մէջ ընդհանուր էր, և գեռ ևս XIX դարում պրօֆ. Ֆէխներն ընդունում էր համայն աշխարհը իրը շնչաւոր էակ: Այդպէս ընդունողների համար հասկանալի է, թէ ինչու օդը ամեն ինչ շարժող և առաջցնող սկզբունք պէտք էր համարել: Օդի ջերմանալուց և նօսրանալուց՝ կրակ, իսկ նրա խտացումից և պահպանումից՝ ամպեր, ջուր, երկիր, քար պիտի առաջացած լինեն: Դեռ ևս Անաքսիմանդըն ու Անաքսիմէնէսն այն միաքն են արտայայտել՝ թէ փոփոխուող տարբեր պերիոդներում տարբեր աշխարհներ են առաջացել և ապա լուծուել, նորերին տեղի տալու համար: Նորագոյն բնագիտութիւնն այս հայեացքը նորից քըննութեան առել և հիմնաւորել է: Գոյացութեան ու ծագման պրոցէսներում մասնակցել են ըստ վերոյիշեալ փիլիսոփների նաև աստուածները, որոնք հին յունական հայեացքով բնութեան մասն էին կազմում, ընութեան ոյժերն էին, նետեարար նրանք աշխարհիս դարպացման պրօցէսի տիեզերակալ առաջնորդներ չեն: Նրանք էլ էին գոյացութեան ենթակայ, այնպէս որ հէնց յունական առասպեկլը աստուածային սերունդների ծագման, կոհենների և ոչնչացման մասին է պատմում:

Ք. ա. շուրջ 500 թուին ապրող Եփեսացի Հերակլիտի մօտը գտնում ենք XIX դարում այնքան հոչակ հանող աստիճանական զարգացման թէօրիան: Նա սովորեցնում էր, որ ամեն ինչ ընկած է մի յաւիտենական

հոսանքի մէջ: Յաւիտենական զարգացման օրէնքից դատ ոչինչ կայուն չէ, այդ օրէնքը նա անուանում է ամենակալ անհրաժեշտութիւն և աշխարհը կառավարող իմաստութիւն, և նոյնացնում է բարձրագոյն Աստծու Զեսի հետ:

Բոլոր գոյացութեան և ոչընչացման մէջ կայուն է Մէկը, Գոն: Այսպէս էր սովորեցնում Պարմենիդէս 500 թ. ա.: Իրական ոչընչացումը գոյութիւն չունի, որովհետեւ ոչ մի իր ոչինչ դառնալ չի կարող, այդ պատճառով այդ Մէկը, Գոն յաւիտենական է, չէր կարող սկսուի և չէր կարող վերջանալ:—Որ նիւթի մասնիկ իրավէս չի կարող կորչել՝ բացայատ զննութեամբ ամենից առաջ Լաւուազիէն 1789-ին է ցոյց տուել. գոյութիւն ունի նիւթի փոխակերպութիւնը նոր ձեերում: Տիեզերական ամբողջի մէջ նիւթի քանակը միշտ նոյնն է մնում. Նիւթի պահպանութեան օրէնքը երգել է Գեօթէն իւր մի բանաստեղծութեան մէջ: Նոյն ձեռվ ընդունում է Վ դարում ապրող Եմպէտօկլէսը: Նա ասում է. չկայ ոչ ծագում և ոչ ոչընչացումը իսկապէս տիեզերական տարրերի նոր խառնուրդ և վերստին բաժանումն է, իսկ խառնուրդի և բաժանման երևայթը նա բացատրում է տարրերի մէջ իշխող «սէր և ատելութիւն» կոչուած ոյժերից: Այս առասպեկտական հնչող բառերի փոխարէն եթէ զնենք վերացական «ձգողական և վանողական» ոյժեր, այն ժամանակ կատանանք այն, ինչ որ կանալը իւր (1755). «Ընդ բնապատճութիւն և երկնքի տեսութիւն» գրուածքով արտայայտել է: Վերջինս աշխատում էր հասկանալի դարձնել երկնային մարմինների ծագումը նիւթի և

նրա մասնիկների մէջ իշխող ձգողական և վանողական ուժերի ներգործութեամբ:

Սակայն նորագոյն աշխարհաբայեացքին ամենից աւելի համապատասխանում է Վ դարում ապրող Դիմուկրիտի ատոմների տեսութիւնը: Նա ընդունում է վերջին, անստեղծ, անսկիզբն ժամանակներից փեղջին, անստեղծ, անսկիզբն ժամանակներից տիեզերի էութիւնը կազմող անթիւ մանը մասնիկներատոմներ: Նրանք ուղղակի չեն ըմբռնուում շատ մանը լինելու պատճառով, այնուամենայնիւ նրանք մի փոքր ծաւալ ունին, միմեանցից տարրերուում են իրենց ձեռվ, գիրքով և ծանրութեամբ:

Այս ատոմները համաձայն իրենց տարրեր ծանրութեան անհաւասար արագութեամբ են վեր ընկնում. թեթեները ծանրերից դէպի վեր են մղուում, որով առաջ է գալիս մի շրջանաձև շարժում: Ատոմների կուտակումովը հասկանալի է դառնուում երկրի, երկնքի, օդի, լուսաւորների առաջանալը: Դիմոկրիտի ասելով ատոմները սկզբնական տուեալներ են: Խստագոյն անհրաժեշտութեամբ այդ ատոմների միմեանց ընդգարուելուց՝ առաջ է եկել մեր տիեզերքի կառուցցուածքը: Մի առաջնորդող գիտաւորեալ նպատակ այս տեսութեան մէջ՝ որոշակի կերպով բացասուում է: Բնաանհրաժեշտութիւնը մի պատճական ոյժ է: Զկայ տիեզերը կազմող ոչ մի հոգի, ոչ մի աստուածային նախախնամութիւն:

Ծրանով վերջապէս ամենավճարական հարցի առաջն ենք կանգնած: Տիեզերքի կազմութիւնը հասկանալի է՝ եթէ սկզբում չի եղել նիւթից և նիւթական, անգիտակից կոյր ու աննպատակ ոյժերից շատ ուրիշ ոչ մի բան, թէ թերես տիեզերքի կազմութիւնը, նրա

իմաստուն կառուցուածքը, դէպի ճշմարութիւնը, արդաւ-  
րութիւնը, և սէրը ձգող, որոնող և հետախուզող մարդկ-  
ային ողին և մարդկային պատմութեան դարդա-  
ցումը անհրաժեշտաբար ստիպում Են մեզ աինդերա-  
կան նիւթերը կառավարող կերպաւորող և օրինակար-  
գող մի հոգի ընդունել: Արդեօք մարդկային հոգում  
նշոյլող բարոյ, գեղեցկի և ճշմարտութեան բարձրա-  
գոյն իդեաները պարզ արտայայտութիւն չեն այն տիե-  
զերակալ Ոգու: Այս երկու աշխարհայեացքները ներ-  
կայումս էլ տիերապեատող դառնալ են ձգտում: Մէկի  
համաձայն մեր փառաւոր աշխարհի ծագումը նիւթից  
և նիւթական ուժերից պէտք է հասկանալ, ըմբռնել:  
Միւս աւելի հեռատես, պարզ և կազմակերպուած աշ-  
խարհայեացքի համաձայն նիւթը և նիւթական  
ուժերը չեն կարող երբէք բաւարար հիմք ծառայել և  
առաջ բերել հոգեկան մեծութիւններ, ինչպէս գիտակ-  
ցութիւն, բանականութիւն, բարոյական միծու-  
թիւն, մարդկային յառաջադիմութիւն: Նիւթից զատ՝  
պէտք է որևէ է կերպ ըմբռնելի, հոգեոր, աինդերական  
դարդացումը դիկավարող մեծութիւններ ընդունել:

Այս բանը գեսկս V դարում Անաբսագորասը՝ ճա-  
նաչեց: Որ նիւթի մէջ շարժում, մինչև իսկ օրինա-  
կարգուած շարժում է առաջանում և այս շարժման  
վերջնական հետեւութիւնը մեր գեղեցիկ և նպատակա-  
յարմար աշխարհն է, չի կարող բացատրուել կոյր,  
ներգործող անհրաժեշտութեամբ և ոչ էլ պատահակա-  
նութեամբ. այդ պատճառով պէտք է ընդունել յաւի-  
տենական նիւթից զատ այդ նիւթը կառավարող հոգի,  
մի աստուածային տիեզերական բանականութիւն:  
Սակայն Անաբսագորասն իւր հայեացքը դեռ չի կա-

րողացել ուղղել դէպի այս Համայնաոգու հոգեկան  
բարձր ստեղծագործութիւնները: Նա էլ մնաց ինչպէս  
իւր նախորդները նիւթական աշխարհի զննութեան  
վրայ կանգնած:

Առաջին անգամ Պղատոնն արաւ որոշ յառաջա-  
դիմութիւն այս ուղղութեամբ (429—348): Դա մի  
հսկոյ էր մեծ մտածողների շրջանում և միենոյն ժա-  
մանակ մի աստուածաշնորհ կրօնական հանճար: Աշ-  
խարհի ճշմարիտ էութիւնը նա տեսնում էր ծշմարտու-  
թեան, բարոյ եւ գեղեցկի յաւիտենական իդէաների  
մէջ, որի անկատար պատճէնն այս տեսական, նիւթա-  
կան աշխարհն է: Այս մեր աշխարհը մի աննախանձ  
բարի և արդար Աստծու գործ է, որն անտեսանելի  
և անստեղծ, կերտող և հայր է բոլոր իրերի: Տիեզեր-  
քի կազմակերպողը կամեցել է հնար եղածին չափ կա-  
տարեալ ստեղծել, այդ պատճառով իւր սեփական էու-  
թիւնից ըստ կարելոյն շատ է հաղորդել նրան: Նոյն  
նպատակով նախ և առաջ նա ստորագաս, քառսային  
և անհանգիստ ծփացող նիւթին կից տիեզերական ո-  
գին ստեղծեց, այդպիսով նա արտայայտութիւն տուեց  
բարոյ և գեղեցկի յաւիտենական իդէաներին: Ու-  
րեմն կոյր պատահականութիւնից չէ առաջացել այս  
ամբողջը, այլ անտեսանելի յաւիտենական Աստուածը  
իւր նպատակներն է իրականացրել այս աշխարհում:  
Ով իւր բանականութեամբ դիտում է քնութիւնը, նա  
հիացած կնկատի Աստծու իդէաները: Այս, այս  
փառաւոր աշխարհը կատարեալ արտացոլումն է, պատ-  
ճէնն է յաւիտենական և անտեսանելի Աստծու և հէնց  
ինքը մի երանելի Աստուած է, միակը իւր տեսակի  
մէջ, ինքնագործ և անկարօտ: Բայց եթէ երբէք ուկ տեղ

անկատարելութիւն է երևում, դա առաջ է գալիս նիւթից, որը լիովին չի ենթարկուում Աստծու նպառակներին:

Դեռ այսօր էլ Դիմոկրիտն ու Պղատոնը կանգնած են միմեանց դէմ յանդիման: Մէկի համաձայն աշխարհ պատահականութիւնից և կոյր անհրաժեշտութիւննից է ծագել. այնինչ աւելի խորը մտածողներն աշխարհում նկատում են իրականացած առտուածային նպատակայարմար մի ծրագիր, և Պղատոնի հետ գովարանում են տիեզերքի ներդաշնակութիւնը: Պղատոնի այս էական մտքերն է հաստատում նրա յաջորդ Արիստոտէլը (384—322): Ստոյիկեան փիլիսոփայութեան դպրոցը նոյնպէս ընդունում է, որ աշխարհս տրամաբանօրէն կարգաւորուած և նպատակայարմար արուեստի արդիւնք է: Քրիստոնէութիւնն էլ սկըսած եկեղեցական հայրերի ժամանակներից Պղատոնի այս էական մտքերը իւրացրել է: Քրիստոնէութիւնը միացրեց մէկ կողմից Իսրայէլի մարդարէների և միւս կողմից Պղատոնի և պղատոնական փիլիսոփայութեան հոգեկան, մտաւոր հոսանքները: Աստծու գերբնականութիւնն աշխարհի հանդէպ, նրա անպայման իշխանութիւնը տիեզերքի վրայ Իսրայէլի մարդարէական հաւատի հիմնաքարն է կազմում: Աշխարհս իբրև աստծուն մօտիկ, իբրև աստծային իմաստութեան, գեղեցկութեան և բարութեան մի յայտնութիւն, այս եղաւ յունական ոգու արդիւնքը: Այս երկու տիեզերապատմական հոսանքները անցնում և միանում են քրիստոնէութեան մէջ: Բոլոր մնացած կրօններին գերազանցելով քիստոնէութիւնն արագ և յաղթական գնացքով տիրեց արևմտեան կուլտուրական աշխարհին.

միաժամանակ իւր մէջ ամփոփեց առ ձեռն եղած մտաւոր ուղղութիւններից ճշմարիտն ու բարին: Այսպէս անվիճելի կերպով իշխում էր երկար դարեր հաւատքն այն մասին, թէ աշխարհը մի ստեղծագործող, ամենագէտ և բարի Ոգուց է առաջացել: Յաճախ իսրայէլական ստեղծագործութեան առասպեկտն ընդունուում էր իբրև ճիշտ պատմական անդեկութիւն: Միենոյն ժամանակ բոլոր դարերի խոր մտածողները գտնում էին, որ այդ պատմական աւանդութիւնների քողի տակ իսկական ճանաչողութիւն կար թագնուած: Այլաբանական մեկնութեան շնորհիւ ո. Գիրքը բացատրուում էր պղատոնական փիլիսոփայութեան մտքով:

## 2. ՆՈՐԱԳՈՅՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲՆԱԳԻ- ՇՈՒԹԻՒՆԸ

Վերածնութեան դարերից սկսած մի բոլորովին նոր գարաշըան է սկսուել, երբ մարդու հոգին ընութեան գաղտիքներն աստիճանաբար իւր օրինակարգ վիճակում ըմբռնել սկսեց: Այդ այն գաղտնիքներն էին, որոնցից բնական մարդը սարսում էր: Ամենից առաջ Կոպերնիկոսը 1543 խախտեց հին տիեզերական պատկերը: Մինչ այդ մարդիկն Արիստոտէլի՝ հետեւելով աշխարհի կենդրոնը երկիրն էին ընդունում: Նրա շուրջը սաւառնում են մոլորակները, լուսինն ու աստղերը հաստատուած թափանցիկ կիսակամարի վրայ, երկինքների մի շարք կարծես թէ կամար են կապել երկրի վրայ: Կոպերնիկը ցոյց տուաւ, թէ ինչպէս պարզ և հասկանալի են գառնում բոլոր երկնային մարմինների շարժումները, եթէ ընդունենք որ երկիրը իւր

և արևի շուրջը միաժամանակ է պտտում: այս ունումը սկզբում սարսափելի գրգռմունք և կրքոտ բանակոիւ առաջ բերեց, որովհետև թուում էր, թէ մարդկութիւնը զրկուում էր իւր լաւագոյն յենարանից: Բոլոր ընթացիկ աշխարհայեացքները երկնքի և հրկրի մասին փշուր փշուր եղան. այն ինչ կոպեռնեկինը վստահելի կողմնակիցներ գտաւ: Հիացած տեսաւ մարդը տիեզերքի անսահմանութիւնը: Եթէ Ա Եսային համարել էր այս բնակելի աշխարհը ինչպէս մի կաթիլ ջուր դոյլի մէջ, և կզզիներն իրքեւ աւազի հատիկներ նժարի մէջ անսահման Սստու հանդէպ (Տ. Ե. Խ. 15) այժմ միայն տեսան, որ մեր երկրագունդը մի ոչինչ մանրիկ փոշի է համայն տիեզերքինկատամբ: 1603ին կեպլեռը սովորեցնում էր մոլորակների շրջանագիծը ձուածե պատկերացնել: Համայն տիեզերքի ճանաչողութեան մէջ մեծագոյն յառաջդիմութիւն անող Նիւտոնը եղաւ, երբ նա 1687-ին ցոյց տուեց, որ նոյն ոյժը, որ քարը դէպի գետին է ձգում, միենոյն ոյժն է նախորոշում հեռաւոր, մարդու աչքին անմատչելի աստղերի ճանապարհը: Տիեզերքի հեռանալու արժանի կառուցուածքի մէջ թուում էր, թէ անբացատրելի ոչինչ չմնաց: Ծանրութեան ոյժը բռնեց այն տեղը, որն առաջ վերագրուում էր աստուածային էակներին: Դեռ ևս կէպլէրի ժամանակ հնարաւոր էր համարուում ընդունել թէ թեաւոր հրեշտակները մթնորտի միջով թուում ու տանում են մոլորակները: Այժմս կարծուում է, որ աստուածազուրկ ընութիւնը ստրկաբար ծառայում է ծանրութեան օրէնքին: Այսպէս հնարաւորութիւն տրուեց աշխարհի ծագումը ծանրութեան օրէնքից բացարելու: Այս քայլն արաւ Քէօնիկորքի փիլիսո-

փան է. Կանտը 1755-ին իւր ընդհ. բնապատմութիւն և երկնքի տեսութիւն գրուածքի մէջ: Նա ընդունումէ, որ համայն տիեզերք կազմող նիւթերն սկրդրում ատոմիների էին բաժանուած, ցրուած ինչպէս նուրբ շամանթաղ՝ լցնում էին նրանք տիեզերական անջրպետը: Ներկայ աշխարհի ծագումն այլիս հասկանալի կլինի զուտ մեքենական օրէնքների հիման վրայ: Նրանցից իրենց ծանրութեան և խտութեան հետևանքով կազմուեցին համեմատաբար աւելի խոշոր կենդրուներ երկնային մարմիններ: Զգողական և վանողական ոյժի շնորհիւ նրանք շարժման մէջ զրուեցին: Կասար բնաւ չէր կարծում, որ զուտ մեքենական բացարարութիւնով կարելի է բաւականանալ և աւելորդ համարել Աստուծոյ գոյութիւնը: Զէր կարելի հաւատալ, որ մի կոյը պատահականութիւն ստեղծել է այս տիեզերական գեղեցիկ և ներդաշնակ կառուցուածքը. պէտք էր ընդունել, որ նիւթի ստեղծողը նրա վրայ դրոշմել է այն օրէնքները, որով աշխարհը կառավարուում է: Կանալի նման Լապլաս 1796-ին կարծում էր, որ եթէ այժմուայ տրեզակնային սիստեմի փոխարէն մի հոկայ գագային գունդ մտածենք, որի շրջագիծը հեռաւոր մոլորակներն էլ անցնելիս լինէր, այն ժամանակ կարող ենք բացատրել թէ ինչպէս այդ գնդի որոշ մասերի խտացումով և ուրիշների հրումով արեգակն ու մոլորակներն իրենց ներկայ շրջանաձև շարժումներով կարող էին ծագել: Երբ նապլէոնն այս մեծ բնագէտին հարցրեց աշխարհի: Արարչի մասին, նա պատասխանեց. «Տէր այս ենթագրութիւնն անելու կարիք չկայ»: Այսպիսով հնարաւոր էր գարձել առանց

նիւթից անցնում են նրանք օրինակի համար օրգանական մարմնի՝ բոյսի մէջ, դրանից նրանք մտնում են կենդանու կամ մարդու մարմնի մէջ, որպէսզի այստեղից էլ մայր երկրին վերագառնան: Թուում է աւելի հեշտ բան չկայ քան նիւթի յաւիտենականութենն ընդունել: Միենոյն նիւթերը, որ այժմ համայն տիեզերքում շրջան են անում, յաւիտենից ի վեր նրանում գոյութիւն են ունեցել, սկզբում թերևս ցրուած գաղային զանգուածում, ինչպէս կանուը և լավասն էին ընդունում, յաւիտենական նիւթը բուհց այսպէս շատերի կարծիքով իմաստուն Արարչի տեղը: Նիւթի պահպանման այս օրէնքի վրայ աւելացաւ 1842 թուից ի վեր Ռ. Մայեռի և Հելմհոլցի ոյժի պահմանման օրէնքը: Շարժումը փոխուում ջերմութեան, լոյսի, եկեղեցականութեան, և այս բոլոր փոփոխութիւնների ժամանակը ոյժի գումարը նոյնն է մնում: Արանից շատերը ոյժի և նիւթի պահպանումն ընդունում են շատերը գերազոյն և տիեզերը կառավարող մի օրէնք: Թուում էր թէ՝ աշխարհի զարգացումը նախամշուշային վիճակից մինչև մեր օրերը բոլոր գաղտնիքները թափանցող բնագիտութիւնից պայծառ կերպով լուսաւորուած էր. մեքենական օրէնքներից, նիւթի և նրա ոյժերից պէտք է բոլորը առանց բացառութեան բացարուէր: Այսինչ կանուը կարծել էր, որ մի որդ կամ մի ճճի, ամենափոքը օրգանիմն անդամ մեքենական բացարութեան համար անանցանելի գծուարութիւն կըներկայացնի, բայց արդէն ըիմիան գտել էր, որ միենոյն նիւթերն են թէ անհօրգանական և օրգանական մարմիների մէջ. նիւթի և ոյժի պահպանութեան օրէնքը նշանակութիւն ունի երկու համար էլ. մարդն օրէնքը

Արարչի աշխարհի զարմանալի կառուցուածքը մերենական օրէնքներով ըմբռնել.

Աւելի հեռուն ուղղեցին քննողներն իրենց հայեցքը: Իրար վրայ զարսուած երկրի շերտերը վկայ համարուեցին երկրի իրար յաջորդող շրջանների. երկրի խորքերում գտնուեցին վաղուց վերաջացած կենդանիների և բոյսերի բրածոներ՝ նրանց կմախքները կամ կմախքի մի մասը: Դրանցից կարելի եղաւ մի մօտաւոր գաղափար կազմել վաղուց, միլիոնաւոր տարիներից ի վեր անհետացած կիսդանական և բուսական աշխարհի մասին: Երկիրս էլ ունեցել է աստիճանական զարգացման շրջաններ: Հրաբխային ժայթքումներից, երկրաշարժներից կում երբ ծովը ցամաք երկիրը ողողում է և կամ ընդհակառակն, երբ ծովի յատակը իրբև ցամաք դուրս է գալիս, կամ ջրերի այն մշտական աշխատանքի միջոցով, որով ցամաքը միշտ հարթուում, մաշուում է՝ երկիրը անթիւ զարերի ընթացքում ստացել է տարբեր տեսք: Երկրի իւրաքանչիւր դարաշրջանից գտնուում են տարբեր ձեւի բոյսեր և կենդանիներ: Միշտ աւելի ու աւելի զարգացող, աւելի կատարեալ օրգաններ ունեցող էակները հետպատէ առաջ են դալիս: Բոլորից վերջը երկրի յետագայ դարաշրջանում երեան է գալիս մարդը: Սաեղծագործութեան փոխարէն աշխարհի զարգացման տեսութիւնը տեղ բռնեց:

Նորագոյն քիմիայի մէջ հանձարեղ մի գիւտ էր այն, երբ 1789-ին Լաւուազիէն ցոյց տուեց, որ նիւթի ոչ մի մասնիկ ոչ մի ժամանակ չի կորչի, նա միայն ստանում է նոր ձեւը: Յաւիտենական փոփոխական դրութեան մէջ շրջան են անում ատոմները. անկիսդան

էլ է նրան ենթարկուած։ Օրինակ Եթէ մարդու ուղեղը լարուած մտաւոր աշխատանքից յոգնել է, հարկաւոր է նոր սիւր՝ մնունդ հանցնել, և ահա նա կվերսկսկի իւր աշխատանքը։ Զարմանալի չէ, որ պահանջուում է բոյսերի, կենդանիների և մարդկանց ամբողջ օրդանական կեանքը մեքենական օրէնքներով բացատրել։ Թէպէտ մինչև այժմ այդ բոլորը չեն գտնուած, բայց բնախոյզը չպիտի յուսահատուի։ Միշտ յառաջ. կգայ ժամանակ երբ տիեզերքի ամբողջ զարգացումը ցրիւ եկած ատոմային վիճակից մինչև մեծ մտածողների մտքերը և մինչև տիեզերական պատմութեան նշանաւոր գէպքերը մեքենական օրէնքներով կբացատրուին։ Դիւրաւա-Ռայմոնդը նշանաւոր դարձաւ իւր այն տեսութեամբ թէ՝ մի բարձր, տիեզերքը ընդգրկող հայեցքով դիտող ոգի կըկարողանայ մաթիմատիքական մի ֆորմուլայով արտայայտել ատոմի դրութիւնը իւր նախնական սկզբնաւորութիւնից, ներկայ զարգացած ձևերից մինչև տիեզերքի վերջնական վաղճանը։ Ով թափանցել և ըմբռնել կարող է ատոմի վիճակը և նրա օրէնքները տուեալ ակնթարթում, նրա համար ոչ անցեալում և ոչ էլ ապագայում ոչ մի հանելուկ չի մնում։ Նրա առաջ բացուած է պատմութան զիրքը։ մեքենական օրէնքներով կարելի է տիեզերական բոլոր պատահարները հաշուել։ Եթէ մի բաց կար աշխարհի բնական բացատրութեան մէջը, այն էլ ծագման վարդապետութիւնն է լեցուեց։ Բոյսերի և կենդանիների արհեստական աճեցման փորձով Անգլիացի բնախոյզ Դարվինը 1859-ին ցոյց տուեց, որ կարելի է անփոփխել նկատուած բոյսերի և կենդանիների տեսակները որոշ չափով արհեստական աճեցմամբ փոփխել։ Դրանից

հետեցրեց, որ այն մշտական կռուում, որը մղում են բոլոր տեսակները իրենց գոյութեան համար, մը նում են միայն նրանք, որոնք համեմատաբար յարմար օրգաններ ունին. աւելի նուազ նպատակայարմար օրգաններով զինուածները կը ոչնչանուն. Սրանից էլ նա հետեցնում էր որ մեր այժմուայ կենդանական և բնական աշխարհը առաջացել է Արարչից ստեղծած քիչ տեսակներից կերպարասափոխութեամբ։ և գէպի աւելի բարձր աստիճաններն արած զարգացմամբ։ Նրա հետեւրդները ընդհանրապէս աւելի առաջ զնացին և կարծեցին՝ որ աստիճարաբար օրգանականը կազմուած է անօրգանականից։ Մարդը սերուած է աւելի շատ զարգացած կաթնատու անատունից։ բարեշրջումը մի կախարդական խօսք դարձաւ, որ բոլոր հանելուկները մի հարուածով լուծում էր։ Աստծու ամեն մի միջամտութիւն իրեւ անարժէք մի տեսութիւն մերժուեց։

Բնագիտութեան մէջ Դարվինից առաջ Լամարք 1809ին ստորինից դէպի աւելի բարձր դիմող զարգացման գաղափարը արտայայտել էր: Հարցը միայն այն էր, թէ մըն էր զարգացման մղիչ ոյժը: Դարվինը բոլոր էակների մէջ, նրանց գոյութեան կոռուում բնական ընտրութեան միջոցով առաջ եկած ջոկջոսումը ընդունում է զարգացման հիմնական օրէնք: Դարվինի աշակերտները, մասնաւորապէս Ենայի բնախոյդ Հէքէլը կարծեցին՝ թէ դարվինական տեսութիւնը կարող է բնագիտութիւնից արտաքսել բոլոր նպատակի պատճառները: Բայց հէնց նորագոյն բնագիտութիւնը բաղմաթիւ փորձերով ցոյց է տուել, որ բոլոր էակները անսահման կերպով չեն փոփոխուում, այլ բոլոր օրգանիզմները կարող են գոյութեան այն հնարաւորութիւնները միայն իւր մէջ զարգացնել, որոնք հէնց դըրուած են նրանց օրգանիզմի մէջ: Ուրեմն, եթէ մի զարգացում ստորին էակներից մինչեւ ամենաբարձրը տեղի է ունեցել, այդ ցոյց է տալիս, որ հէնց սկզբից զարգացման մի ուղղութիւն նախատեսնուած էր և կամ սաղմնային զըութեամբ տրուած էր, որը պիտի դէպի իւր նպատակը դիմէր: Բնագիտական առաջնորդութիւն: Զարգացման գաղափարը խիստ արդիւնաւէտ գաղափար է. նա մեր աշխարհայեցքի հիմնական գաղափարն է դարձել: 1784-ին առաջին անգամ Հէսպէուը իւր «մարդկութեան պատմափիլիսոփայութեան իդէաներ» գրքում զարգացման գաղափարը զործ զրեց մարդու բնական հոգեկան պատմութեան վրայ: Նա տեսնում է մարդու հոգեւոր ամրող պատմութեան մէջ բողբոջումն այն սաղմերի, որ Աստուած այնքան առատ և լի բնութեան մէջն է դրել: Հոգեկան աշխարհի համար հէոդէսեան այս մտքերը Հէկէլն աւելի առաջ տարաւ:

## III.

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

## 1. ԲԱՐԵՇՐՋՄԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ճիշտ է որ այս բարեշրջում խօսքը բոլոր հանեւուկները լուծում է: Ընդհակառակին՝ բարեշրջում խօսքը թագցնում է տիեզերական հանելուկը իւր մէջ. որովհետեւ հարց է ծագում. ինչն է բարեշրջուում և ողի է բարեշրջում: Ո՞րն է բարեշրջման մզիչ ոյժը, դէպի ո՞ր նպատակն է դիմում այդ բարեշրջումը: Դաւնում է ամեն ինչ աննպատակ, անծրագիր, պատահականօրէն, թէ պէտք է զարգացման մի որոշ ուղղութիւն ընդունել: Բարեշրջում կամ զարգացում խօսքի մէջ կայ յամենայն դէպս մի ինչ որ նպատակաւորութիւն: Զարգացման գաղափարը խիստ արդիւնաւէտ գաղափար է. նա մեր աշխարհայեցքի հիմնական գաղափարն է դարձել: 1784-ին առաջին անգամ Հէսպէուը իւր «մարդկութեան պատմափիլիսոփայութեան իդէաներ» գրքում զարգացման գաղափարը զործ զրեց մարդու բնական հոգեկան պատմութեան վրայ: Նա տեսնում է մարդու հոգեւոր ամրող պատմութեան մէջ բողբոջումն այն սաղմերի, որ Աստուած այնքան առատ և լի բնութեան մէջն է դրել: Հոգեկան աշխարհի համար հէոդէսեան այս մտքերը Հէկէլն աւելի առաջ տարաւ:

դիմութեամբ մարդկութիւնը իւր նախնական բնական վիճակից դիմել է գէպի միշտ աւելի բարձր հորեւոր և բարոյական կուլտուրայի. ինքնուրոյն մտածելը, տրամաբանօրէն դատելը, գիտական աշխարհայեացըն ու փիլիսոփայութիւնը աստիճանական կատարելութեամբ ձեռք հն բերուած։ Բարբերի անասնական կոպտութիւնը տեղի է տուել բարոյական նուրբ զգացողութեան։ Գիտական, գեղարուեստական և կրօնական կեանքը աստիճանաբար աւելի բարձր ձեռքով հանդէս է եկել։ Ինչքան որ ճանաչել կարող ենք, մարդկութիւնը ձըգտում է միշտ գէպի աւելի հետաւոր նպատակներ, որով հոգեկան և բարոյական անձնաւորութիւններ են նրանում հանդէս գալիս։

Այս բոլորից հետեւում է, թէ տիեզերքի հիմքում, Աստծու մէջ հոգեկան և բարոյական ոյժեր կան, որով հետև բաւարար հիմքի օրէնքի համաձայն միայն մի բարի և հոգեոր ոյժ կարող է նպատակայարմարը և հոգեորը առաջ բերել։

## 2. ԱՍՏՈՒԾԾԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Աստծու արարչագործութեան եղանակի մասին վերոյիշեալից կարելի է եզրակացնել, թէ Աստծու գործունէութիւնը չի կարելի ոչ ականջով լսել, ոչ ձեռքով շօշափել և կամ մարմնի աչքով տեսնել, այլ նա ներգործում է ծածուկ, իրբե մի հոգեոր ոյժ, որ յայտնագործուում է տիեզերական ամեն տեսակ իրականութեան մէջ։ Որ մի նպատակադիր ոյժ կայ, երեւում է արարչագործութեան հետեւանքից։ Ի՞նչ կարող էր տեսնել Աստծու գործունէութիւնից այն մարդը, որը դի-

ցուք հսարաւորութիւն ունենար գիտելու ամբողջ աշխարչագործութեան ընթացքը կամ զարգացման պրօցէսը միլիօնատոր տարիների ընթացքում։ Նա այնուացնայնիւ ոչ մի կերպ ոչ մի տեղ չէր կարողանայ տեսնել, թէ ի՞նչպէս Աստծու ստեղծագործող ոյժը իբրև առանձին պատճառ նիւթական ոյժերի հետ միասին շօշափելի կերպով ներգործում է գոյացութեան պրօցէսում։ Մասնակի գէպքերում միշտ աչքի են ընկնում նիւթական ոյժերը. իսկ Աստուած միշտ ներգործում է բնական ոյժերի միջոցով։ Նրանց համագործակցութեան հետեւանքը բանականութեամբ օժտուած մարդուն յայտնուում է իբրև աստուածային ստեղծագործութիւն։ Մարդկութեան հոգեոր պատմութեան մէջ ներգործում է Աստուած միշտ անձնաւորութիւնների միջոցով, որոնք իրենց լաւագոյն ոյժերը լաւի ծառայութեանն են ենթարկում։ Այն ինչ առանձին, մասնակի երեսյներում այստեղ էլ միայն մարդկային ծրագիրները, կամքի ուղղութիւններ, մարդկային մոլորութիւններ, ու յառաջադիմութիւններ են անաշխատ հերոսները չելի և սակայն մարդկութեան մեծագոյն հերոսները իրաւամբ իրենք իրենց համարել են գործիք Աստծու ձեռքին։ Աստուած նրանց միջոցով նոր երեսյներ է առաջ բերել.

## 3. ՅԱՀԻՑԵԱՆՍ ՆԵՐԳՈՐԾՈՂ ԱՍՏՈՒԱԾ

Այս պատճառով սխալ է, երբ մարդը Աստծու ստեղծագործութիւնը երկրի սկզբնաւորութեամբ է սահմանափակում։ Աստուած մշտապէս ներգործում է, Այսօր էլ նա այլ կերպ չի գործում, քան միլիոնաւոր

տարիներ առաջ: Եթէ ճիշտ է, որ այս գոյութիւն ունեցող աշխարհի ստեղծագործութիւնը միլիոնաւոր տարիներ է տևել, ապա պարզ է, թէ ինչքան սխալ է, ստեղծագործութեան գաղափարը միայն աշխարհիս սկզբնաւորութեան վերայ կիրառել: Բնականաբարհինց առաջին սկզբնաւորութիւնները խաւարով են պատաժ. մենք միայն եղրակացնել կարող ենք, որ ներկայումս յայտնագործուող Աստծու հոգեոր ոյժը աշխարհի ըսկը ըստին էլ պէտք է ներդործող գեր կատարած լինէր: Սիալ է նոյնպէս ստեղծագործութիւնը միայն աշխարհի նիւթական հիմքի վրայ տարածել: Ստեղծագործութեան վերջնական նպատակը, ինչքան դա ըմբռնել կարելի է պայծառ, բարոյական անձնաւորութիւնների մշակումն է. Լուսերը տասնաբանեայ պատուիրանի առաջին յօդուածը բացատրելիս՝ գլխաւորապէս գոյութեան նիւթական պայմանների ստեղծագործութեան՝ մարմինն ու կեանքը հոգացող և հովանաւորող Աստծու գործունէութեան մասին է խօսում. ինչ որ մեծ թերութիւն է: Քրիստոնէական քարձրագոյն գաղափարը՝ Աստուած ստեղծել է ինձ բարոյական անձնաւորութիւն լինելու չի բացատրուած:

Գիօթէն աւելի խորն է ըմբռնել Աստծու ստեղծագործութիւնն ասելով՝ «Նա է ստեղծել հաւատ, յոյս, սէր, գործ և ոյժը»: Աստուած է ստեղծել տառապանքների մէջ հերոսութիւն. Նա իւր աշխատանքով ձեւակերպում է բարոյապէս ձգաողին. Նա մարդկանց հոգիների վրայ է աշխատում նրանց մէջ քնած լաւագոյն ոյժերին դէպի կատարելութիւն առաջնորդելու: Միթէ քրիստոնէական հաւատը պահանջում է ընդունել, թէ Աստուած մի որոշ ակնթարթում «սկզբանէ»

աշխարհս ստեղծել է սկսել, հարկաւո՞ր է որ գոկմա գարձնենք այն, որ աշխարհս միանգամբ ոչնչից է առաջացել: Մեզոչինչ չի ստիպում այդպէս ընդունել Ծնողհակառակնեթէ Աստուած յաւիտենապէս ներգործող է, ապա պէտք է յաւիտենից ի վեր մի աշխարհ գոյութիւն ունենար, որի վրայ իւր ներգործող գործունէութիւնը տարածէր: Յոյն հկեղեցական նշանաւորագոյն զիտնականը Օրիգենէսը՝ Ք. յ. Աղարում արդէն այն միտքն է արտայայտել, թէ անվերջ յաջորդականութեամբ յաւիտենից ի վեր միշտ նոր տիեզերքներ են առաջ եկել Աստծու ստեղծագործական ծրագրի համաձայն: Եթէ նիւթի ոչ մի մասնիկ ոչինչ չի դառնում, ապա նիւթի յաւիտենականութիւնն ընդունել հասկանալի է դառնում, բայց որովհետեւ նիւթական ոյժերի համագործակցութիւնը միշտ նպատակայարմարն է առաջ բերում, որովհետեւ վերջինվերջոյ բնութեան մայրական ծոցից հոգեորն է բղխում, զրանից կարելի է հետեւ նել, որ չկան միայն կոյր նիւթական ոյժեր և չեն եղել, այլ միշտ նիւթական աշխարհի վրայ մի աւելի բարձր հոգեւոր կարգաւորութիւն է իշխել: Աշխարհը յաւիտենից ի վեր Աստծու ոյժից կաթումն է ունեցել: Աշխարհն առանց Աստծու չէ, բայց Աստծուն էլ առանց աշխարհի պատկերացնելն անկարելի է:

#### 4. ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԱՇԽԱՐՀ

Սրանից յերոյ պարզունեմ է նաև, որ Աստծուած և աշխարհ միմիհանց համանը օտար և անստարբեր միմեանց հանդէպ չեն կանգնած: Մի ներքին յարարերութիւն պէտք է ընդունել, չակառակ Աստծու և աշ-

խարհի այն խիստ բաժանմանը, որը սովորեցնում էր իսրայէլական կրօնը։ Աշխարհս Աստուածայինը իւր մէջ է ամփոփում, այս էր հակագերմանական տիեզեւածնութեան առասպելների ճշմարտութեան կորիգը։ Պղատոնն է առանձնապէս այս ճշմարտութիւնը փիլիսոփայօրէն արտայայտել։ Աստուած պէտք է ըմբռնել իրեւ տիեզերքի մէջ ներգործող բարի Ոգի։ Իւր գոյութեան լլութիւնից նպատակայարմարն ու բարին միշտ նոր և միշտ հարուստ ձեւերով հանդէս է բեկում Գէօթէն իւր «Gott und Welt» բանաստեղծութեան մէջ այս աշխարհայեացքին դասական արտայայտութիւն է տուել։ Նրա համաձայն ամբողջ բնութիւնը լիքն է Աստուածայինով։ նա Աստծու յայտնութիւնն է։ Ֆառաւստի մէջ Գէօթէն ասում է. «Աշխարհս Աստուածութեան կենդանի հագուստան է», ամենուրեք կարող է մարդը աստուածային Ոգու հետքերը գտնել. բայց մեղ համար աւելի պայծառ կերպով յայտնագործում է Աստծու աշխարհը մարդկային հոգում հաճանչող վեհիդէաների և արժեքների մէջ։

## 5. ԶԱՐԵ ԱՇԽԱՌՀՈՒՄ

Վերոյիշեալ ուրախ լաւատես աշխարհայեացքի  
իրաւացիութիւնը վերջին դարում խիստ վէճի առար-  
կայ է գարձել: Տիեզերական վիշտը ծանրապէս ճնշում  
է շատերի տրամադրութիւնը: Միայն բարոյ և աս-  
տուածայինի յայտնութիւնն չէ գտել մարդը այս աշ-  
խարհում. թուում է՝ թէ վիշտը գերազանցում է  
հաճոյքին: Բնութեան մէջ հազարաւորներն են  
մերնում իրենց սաղմի մէջ. բուսական և կենդանա-

կան բոլոր էակները միմեանց փոխադարձաբար հաւածում են, մի մշտական պատերազմ, լավելն ու մորթելը գոյութիւն ունի ամենուրեք։ Նոյնակէս մարդկանց մէջ էլ իշխում է ոչ թէ բանականութիւնը, այլ կամայականութիւնն ու անարդարութիւնը, մի կոյր բաղդ։ Շոպէն-Հառէլը XIX դարում շշմեցնող լեզուով երջանկութիւնը գերազանցող վշտի մասին է խօսել ու հնչեցրել հին հնդկական տեսչանքը կեանքից ազատուելու և դէպի ազատութիւնը դառնալու։ Նա շատ սրտերում արձագանգ գտաւ։ Աշխարհը նրա համար մի ինքնագիտակից Աստծու բարի ստեղծագործութիւն չէ, այլ կոյր բանականութիւնից զուրկ մզման մի վիժուածք է, որ դէպի կեանքն է ձգտում։ Ի հարկ է, պէտք է ընդունել, որ աշխարհը երկու դէմք ունի. անհատնում սիրոյ և բարութեան յայտնութիւնը, նպատակայարմարութիւնը, իմաստալիութիւնը մի կողմն է կազմում։ և կոյր կը լինէր մէկը, եթէ այսպիսի փառահեղութիւնները չի տեսել և չի ապրել։ Բայց կայ հակառակ՝ երևոյթների աննպատակ թուացող մի բազմութիւն, մարմնական վշտեր ու հոգեկան մոլորութիւններ, որոնք Աստծու տիեզերակալ ոյժին չեն ենթարկուում։ Մեծ մտածողներից Յակոբ Բէօհմէն (1575—1624) և Շէլլինգ (1775—1854) Աստծու մէջ եղող մի խաւար բնութեան մի նախապատճառի, մի անհունութեան մասին են խօսում, որը իրեւ ոչ լիովին յաղթահարուած քառականանալի է դարձնում աննպատակն ու չօրինակարգուածը։ Աշխարհը մի արդիւնք է այն կուսի, որ աստուածային իմաստութիւնն ու բարոյութիւնը մզում են իրեն հակառակող նիւթի դէմ։ բարւոյ յաղթութիւնը մի վեհ նպատակ է, որին զործակցելու մենք էլ

ենք կոչուած: Աստծու իմաստութիւնը կատարեալ է,  
բայց Աստծու ոյժը նրա գէմ հակառակող նիւթի շնոր-  
հիւ սահմանափակ է:

Նորերս նման տեսութիւններ արձագանդ են դըտ-  
նում: Կանրլ Անտրէզէն իւր «պանթէիզմ և թէիզմ» յօ-  
դուածի մէջ Աստծու հետ ընդունում է կոյր ներգոր-  
ծող անբանական սկզբունք, որից հետևնում է բոլոր  
պատճականը, հակաօրինականը և չարը: Նա տիեզե-  
րական պրոցեսի նպատակը գտնում է Զարի աստի-  
ճանական յաղթահարման մէջ: Նա կարծում է, որ  
ստեղծագործութեան պատճառը պէտք է փնտուի նրա-  
նում, որ Աստուած կամեցել է իւր նպատակայարմար  
և կարգաւորուած աշխարհով յաղթահարել անբանին,  
անբանականին: Նոյն մտքերն է շօշափում երբեմն նաև  
Ֆ. Նաումանը ասելով, որ աշխարհը լիքն է Աստծու  
բարեացակամութեամբ և միենոյն ժամանակ նրան  
ընդգիրմացող արգելքներով, իսկ մեր բախտը այդ երկ-  
սի արդիւնքն է: Նոր չէ այս միտքը որովհետև հին  
դարերից արդէն պատկերացուած է Աստուած իբրև  
քառսի դէմ կոսուղ, որից նա աշխարհս ստեղծեց և որը  
սակայն միշտ ուզում է նրա ձեռքից դուրս գալ.  
միջնադարեան մտածողութեան համաձայն Աստուած  
միշտ կուռի մէջ է սատանայի հետ հոգիների համար,  
նա միշտ արգելքների է հանդիպում որով ամեն բան  
նրան չի յաջողուում.

Պէտք է ընդունել, որ բոլոր տեսութիւնները, ո-  
րոնք չարի սկզբանաւորութեան հարցը լուծել են ու-  
զում, դժուարութեան են հանդիպում: Աստուած չա-  
րիքը թոյլ է տուել նրան համար, որ դա անխուսափե-  
լի էր: Աստծուց իրենից անկախ է Զարի անհրաժեշտու-

թիւնն ու անխուսափելիութիւնը: Եթէ Զարիքի և վըշ-  
տի ծագման բոլոր հարցերը անհասկանալի հանելուկ-  
ներ են մնում, դրա փոխարէն տարբեր մտածողներ  
աշխարհի զարգացման նպատակի վերաբերմամբ աւելի  
շուտ են համաձայնութեան գալիս: Նպատակն է բար-  
ոյ յաղթահարմակը չարիքի վրայ և տիեզերական վշտի  
աստիճանական յաղթահարումը: Վերջ ի վերջոյ չա-  
րիքը ծառայում է մարդկանց մէջ ոյժեր զարթեցնելու,  
ինչպէս են քաջութիւնը, հերոսութիւնը, հաւատի  
ոյժը. չարիքը վերջապէս մարդուն գրգում է չարիքը  
ջախջախելու: Բարոյական գործնական ոյժը միայն  
այն ժամանակ է զարթնում, երբ ես դէպի չարը ձըգ-  
տող հակումները զսպում եմ. այդ պատճառով ստեղ-  
ծագործութիւնը ներկայ աշխարհում դեռ չի վերջա-  
ցել: Միայն բարու յաղթութեամբ, երբ Աստուած ըստ  
ամենայնի ամեն բան կլինի, Նրա արարչագործութիւ-  
նը կլրանայ: Թէ այս է վերջին նպատակը՝ պարզուում  
է տիեզերքի ժամանակակից յառաջադիմութեան ուղ-  
ղութիւնից: Ճշմարտութիւնը վերջ ի վերջոյ յաղթա-  
հակում է, չնայած որ դարեր շարունակ ճնշուած էր:  
Մի անգամ գտնուած ճշմարտութիւնը երբէք չի կարող  
ընդմիշտ կորչել. երբէք մի հոգեոր և բարոյական յա-  
ռաջադիմութիւնը իգուր չի մարտնչել: Ամենից վերջը  
միշտ բարին է յաղթում, այն ինչ չարութիւնն ու  
խարդախութիւնն ինքն իրեն փլչում են: Այսպիսով  
անկարելի է զառնում ընդունել, ինչպէս քրանսիացի  
և Գրքի քննադատ Ունանն էր պատճահարար քարո-  
զում, թէ աշխարհը վերջ ի վերջոյ Աստծու ձեռքին  
խաղալիկ է, որին նա իւր հաճոյքի համար է ստեղ-  
ծել, և իւր բարձր բուրգից դիտում է այն տեսարանը,

թէ ի՞նչպէս մարդկութիւննուրախանում, որոնում, աշխատում և տանջուում է: Տիեզերքի ստեղծագործութեան նպատակն աւելի շուտ բարոյական անձնաւորութիւններ հանդէս բերելն է: Կեանքից յոգնած տրամադրութիւն ունեցող մէկը միայն ինքն իրենից և իւր սեփական կեանքից և աշխատանքից վհատուում է, կորցնում աչքից իւր կեանքի նպատակակէտը: Այս տրամադրութիւնից այն հայեացքն է առաջանում, թէ աշխարհս ընդհանուր առմամբ աննպատակ է: Գերմանացի բանաստեղծ Ա. Բոհեմը փորձել է թափանցել կեանքի կոռում լքուած մարդու հոգին և ըմբռնել թէ ի՞նչպէս է անդրադառնում տիեզերքի ստեղծագործութիւնը նրա մէջ: Բանաստեղծը իւր «Stirb und Werde» ոտանաւորների շարքում ընդհանուր գծերով նկարագրում է աշխարհիս անց ու դարձը, մարդկանց ճիգերը, փառք, հարստութիւն ձեռք բերելու, տիեզերական հանելուկիները լուծելու և վերջը դալիս է այն եղակացութեան, թէ «Զարմէ»:

Ի հարկէ վճռական խնդիր է՝ թէ իրամ այս կեանքը ոչինչ չարժէ: Եթէ մէկի դժբաղդութիւնն էլ աւելի մեծ լինի, եթէ վշտերը դառն լինեն և սիրտը կարատող, եթէ չքաւորութիւնն ու զրկանքը, առանջանքն ու նեղութիւնը անտանելի դառնան, այնուամենայնիւ մի հարց միշտնրա առաջ կանգնում է. «անկարելի՞ էր միթէ քեզ համար այդ թշուառութիւնն և ամեն տեսակ գըժբախտութիւնն անցկացնելով՝ ձգտել բարձր բարոյական անձնաւորութիւն դառնալու, անկարելի՞ էր զարգացնել քո մէջ բարութեան սերմերը»: Ո՞վ սիրտ կանի այս հարցին պատասխանելու. «Այն, ես անկարող էի բարիք գործել և լաւ մարդ դառնալ», իսկ եթէ ա-

մեն մի մարդու համար այդ հնարաւոր է, և քանի որ իւրաքանչիւր կեանքը նախասահմանուած է բարոյական անձնաւորութիւն դառնալու, այն ժոմանակ թնդմեր կեանքն էլ այն ուրախ գիտակցութեամբ լիցուի, թէ կայ մի Աստուած, որ Տիեզերքի և բարոյական անձնաւորութեան Արարիչն է:





130

2n 94

L 0 3 U S b U U U

- 1) Ի՞նչ է կրօնը և ի՞նչ է բարոյականութիւնը . . . . . 15 կ.
- 2) Սրբազն պատմութիւն իսրայէլի . . . . . 50 կ.
- 3) Ի՞նչ է Աստուածաշունչը . . . . . 20 կ.
- 4) Բնագիտական և կրօնական աշխարհայինցը 20 կ.
- 5) Ի՞նչպէս ստեղծուեց աշխարհը . . . . . 10 կ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅԱ ԿԲ ՏԵՍՆԵՆ

Դր. Մ. Խոստիկիանի

- 1) Բարոյագիտութիւն
- 2) Աստուածաբանութիւն Նոր կտակարանի
- 3) Ո՞վ էր Յիսոս

Վաճառուում է հեղինակի մօմ

ՅՓ

David der Philosoph Dr. M. Khostikian

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԵԿ

ՀՀ Ազգային գրադարան



NL0150644

